

ԱՐՄԵՆ ԴԻՄԱՔՈՒԵԱՆ

ՇԻՐՎԱՆՉԱԴԻՔԻ

Մաս երկրորդ

(Շարունակութիւն՝ 1)

X

Ակզբում Գայլիանէի անսպասելի բարեկամական վարժունքը Կիմաքսեանին սպատճառեց մի անսովոր բերկրութիւն։ Տուն վերագառնալով, նա անընդհատ շւացնում էր և քննժի տակ երգում։ մի բան, որ երբէք չէր արել և որ հետեւեալ օրը կրինելով շատ ուրախացրեց և շատ զարմացրեց Սիրականին Գայլիանէն նրան չէ ատում, չէ արհամարհում։ Նա մինչև անդամ յանդիմանում է նրան, թէ ինչու այնպէս երես է դարձրել նրանից։

Բայց անցաւ առաջին տպաւորութիւնը, և Կիմաքսեանի լուրջ միաքը շուտով մոռացաւ տարօրինակ բերկրութիւնը։ Գարձեալ մաստանջութիւնը տիրեց նրան, և այս անդամ աւելի ծանր մի մաստանջութիւն։

«Ի՞նչ օգուտ, ի՞նչ օգուտ, գոչեց նա յանկարծ, բեեռւածի պէս կանգ առնելով սենեակի մէջ տեղում, չէ որ այսուհետեւ ուշ է և շատ ուշ։»

Միթէ բազդը կարող է այլ ևս ժպտալ նրան, և Բնչպէս: Ո՛չ, նա չը պիտի մօտենար Գովիանէին, չը պիտի խօսէր նրա հետ: Կ՞նչ ապացոյց կաջ, որ այդ սիրուն տիկինը չէ ուզում նրան ծաղրել իւր մոքում:

Նա մի բարկացոտ շարժում գործեց, շտապով հագնեց և զնաց դպրոց: Այստեղ երկպառակութիւնները օրից օր սաստկանում էին: Արդէն բացարձակ խօսում էր, թէ առաջիկալ տարի Խնիաթեանը տեսուչ պէտք է նշանակի: ի:

Դիմաքսեանի դրութիւնը քանի գնում վատանում էր: Այժմ ամենքն էին նրա դէմ: Ամրողջ մեծ պասի ընթացքում Խնիաթեանը աշակերտներին, առանց տեսչի հրամանի, տանում էր եկեղեցի: Զարչարման շաբաթը նա ինքն էլ նրանց հետ հազորուեց, իւր դէմքի վրաց պահելով խորին ջերմեռանդութեան արտայայտութիւն:

Նկատելի էր, որ հետզհետէ աշխատում էին դպրոցից վանել այն բոլոր վերանորոգութիւնները, որ Դիմաքսեանը մոցը ել էր այնտեղ: Եւ այդ բոլորը կատարում էր հոգաբարձուների գիտութեամբ: Դիմաքսեանը բարիկանում էր, կատաղում, բողոքում: Նրա առջև գնում էին դպրոցի կանոնադրութիւնը և հոգաբարձութեան իրաւունքները:

Ցաւալի և վշտալի էր նրա համար տեսնել, թէ ինչպէս նորից աշակերտաները սկսում են թառամել, նորից անհետանում է նրանց դէմքերից դւարաթութիւնը և տեղի տալիս ճնշող մելամաղձութեան: Եւ նա գիտէր, որ այդ բոլորի խօսկան հեղինակները երկու մարդ են—Բարաթեանը և Վէքիլեանը:

Զէր կարելի ասել, թէ այդ մարդիկ բոլորը բացառապէս Դիմաքսեանի ջգրու էին անում: Ո՛չ, մեծ մասամբ այդ բղխում էր նրանց համոզմունքից: Աշակերտների մէջ զլացած հլութիւնը նրանք համարում էին համեստութիւն, երկիւզը—հեղութիւն: Դա էր նրանց աչքում բարոյական դիսցիպլինան:

—Այժմ դպրոցը դպրոցի է նման և ոչ թէ նիհիլատների ժողովարանի, —կրկնում էր Վէքիլեանը, ձեռները հաճոյքով շփելով միմեանց:

—Այս, իհարկէ, պատասխանում էր Բարաթեանը, —եթէ ոչ, առաջ ամեն մի դլուխ առանձին գաղափար ունէր: Ամեն մի աշա-

կերտ արդէն խօսքը այսպէս էր սկսում. «Իմ կարծիքով...» Աշակերտ և կարծիք...

— Բայց պէտք է տեսչի մասին էլ հոգանք:

— Կարիք չը կայ, նա այժմ առաջները հանած անվտանգ դալ է, թողինչքան ուզում է — մոհին:

Հոգաբարձութեան ծայրայեղ կամայականութեան դէմ Դիմաքսեանը զրաւոր բողոք ուղարկեց Սինոդին: Բայց անցել էր հինգ շաբաթ և դեռ պատասխան չէր ստանում:

— Եւ երբէք չես ստանալ, — ասաց մի օր բժիշկ Սալամբէկեանը:

— Ինչի՞ւ:

Բժիշկը ասաց, թէ բողոքը այժմ առաջնորդի զրասեղանի մէջ է: Դիմաքսեանը սխալւել էր, անմիջապէս դիմելով Սինոդին: Նա պէտք է առաջնորդի միջոցով բողոքէր: Այժմ թող նա սպասի սրբագանի «վերաքննութեան»:

— Քեզ մվ ասաց այդ, — հարցրեց Դիմաքսեանը:

— Վէքիլեանը:

Բժիշկը պատմեց, թէ նախընթաց օրը սաստիկ ընդհարում է ունեցել իրաւաբանի հետ Դիմաքսեանի պատճառով: Վէքիլեանը աշխատելիս է եղել ապացուցանել, որ տեսուչը իւր դադափարներով դպրոցը տակն ու վրայ է արել: Սալամբէկեանը հաստատել է, թէ Վէքիլեանը և Տարաթեանը իրանց դադափարներով դպրոցը ուզում են բարոյական անկելանոց դարձնել: Վէճը հասել է ծայրայեղութեան, երիտ ընկերները միմեանց վիրաւորական խօսքեր են ասել:

— Ես սառնարիւն մարդ եմ, բայց այդ անխիղճը մի այնպիսի սատանայական ակնարկութիւն արեց, մի այնպիսի ածական աւեց քեզ, որ արիւնս զլսիս խփեց, ես ուզում էի նրան ապոակել:

Խօսակցութիւնը տեղի ուներ Մասրեանի սենեակում: Իդէալիստը վրդովւած ականջ էր դնում, սակայն խօսակցութեանը չէր մասնակցում:

— Այժմ ի՞նչ կը հրամայես անել, — դարձաւ Դիմաքսեանը նրան:

— Կը հրամայեմ, որ մրցումդ շարունակես:

— Առանց զէնքի, միայնամկի:

— Քո զէնքը թող լինի ճշմարտութիւնը, եթէ համոզւած ես, որ նա քո կողմն է:

— Այդ կը նշանակէ երկաթէ պատը և զունդներով փորել։
 — Փորիր, բայց մի հրաժարւիլ գործից։
 — Ես չեմ հրաժարւիլ, բայց իրանք կը հրաժարեցնեն։
 — Խելօք մարդիկ նրանց վարմունքը կը համարեն բռնութիւն։
 — Իսկ ես կ'ասեմ, — մէջ մոտաւ բժիշկ Սալամբէկեանը, — որ
 խելօք մարդիկ կը ծիծաղեն Արտէնի վրայ։ Ասա խնդրեմ, քո կար-
 ծիքով, ովքեր են այդ խելօք ասածներդ։ Զը լինի՞ թէ քեզ և ինձ
 ես համարում։ Երեսիդ խաչակնքիր ու մեղայ եկ։ Այս, մեծապա-
 տիւ պարոն օպտիմիստ-իդէալիստ, խելօքը նա է, ով որ իւր բարե-
 կամի ոտների տակ ձմերուկի կճեալ է դուռմ, որ նա մի լաւ սար-
 պոմորտալ անի։ Այսպէս է անում ընկերը ընկերոջ, իսկ թշնամի-
 ները, հնիաթեանները և նրանց նմանները, զիտես ինչ են անում։
 Նրանք հասարակութեան մէջ տարածում են, թէ Դիմաքսեանը
 կաշուռած դաւաճան է, հասկաննեմ ևս ինչի մասին է խօսք։
 — Ինիաթեամնը, իմ մասին, — գոչեց Դիմաքսեանը խեղդւած
 ձայնով։

Բուռն կատաղութիւնը դուրս խլեց նրա կրծքից մի երկարառու-
 ղառն ծիծաղ։ Զեռը խփելով ճակատին, նա ուժասպառ նսոեց
 աթոռի վրայ, կրկնելով։

— Ե՞ս դաւաճան, ազգավաճան...
 Անցել էին մի քանի օրեր այդ խօսակցութիւնից։ Դիմաք-
 սեանը տանը նստած խորհում էր իւր անելիքի մասին։ Տօն օր էր։
 Յանկարծ նա լուսամոի առաջ, պատշգամբի վրայ, տեսաւ մի խումբ
 աշակերտներ, որ, միմեանց ուսերի վրայով գլու խները բարձրացրած,
 նայում էին դէպի ներս։

Նա դուրս եկաւ և հարցրեց, ինչ են կամենում։

— Բողոք ունենք, պարոն տեսուչ։

— Մոեք։

Միմեանց ետեից, ամաչելով ու քաշելով, ներս մտան վեց
 պատանիներ տասնուեօթից մինչև քսանուերկու տարեկան։ Բոլո-
 րին էլ Դիմաքսեանը առանձին առանձին ճանաչում էր, բոլորն էլ
 գիւղացիներ էին։ Հինգ հրորդ ու վեցերորդ դասատան աշակերտներ։

Գդակները փորների վրայ պահած, նրանք շարւեցին պատի
 տակ, «Աւետիս» ասող տիրացուների պէս։

— Ի՞նչ էք կամենում:

Աշակերտները իրանց միջից մէկին բոլթերով առաջ դցեցին: Դա ամուր կազմաձբով, դէմքի խոշոր դժերով լուեցի Մարաքեանն էր, թւաբանութեան մէջ ամենից ընդունակ աշակերտը:

— Պարոն տեսուչ, — խօսեց նա, առաջ նայելով իւր գդակին, յետոյ առաստաղին, յետոյ տեսչին, — մենք բողոքում ենք:

Նա շփոթւած էր, հազիւ կարողանում էր բառերը արտասանել: Դիմաքսեանը խրախուսեց նրան և բարեկամսբար հրատիրեց ամենքին նստել: Բայց աշակերտները դդակները շուռ տւեցին ձեռներում, հագեցին, այս ու այն ոտի վրայ տատանւեցին և չը նստեցին:

Մարաքեանը շարունակեց.

— Մեղ հետ շատ վատ են վարւում, պարոն տեսուչ, կարծես, մենք վայրենիներ ենք:

— Առանց աւելորդ խօսքերի, պատմի՛ր, ինչ-որ պատահել է: Ո՞վ է ձեզ հետ վատ վարւում:

— Վերակացուները: Երէկ երեկոյեան միասին հաւաքւած «Արկածներ» էինք կարդում: Յանկարծ հերթակալ վերակացու պարոն թունիբէկեանը եկաւ գիրքը ձեռքից լսեց, գլխիս խփելով ասաց. «բռի լուեցի, քեզ չմ' ասել ընկերներիդ մի՛ անբարոյականացնիլ:

— Զեղ արգելվել են այդ գիրքը կարդալ:

— Այն:

— Ուրեմն պարտաւոր էիք չը կարդալ: Այդ է միայն ձեր բողոքը:

— Ոչ, պատճառներ շատ կան: Չորրորդ դաստանը Մուրգուղեանին, հինգերորդ դաստանը Մարբագեանին, վեցերորդում Սալանեանին մեր գլխին լրտես են նշանակել:

— Լրտես, — զոչեց Դիմաքսեանը զարմացած:

— Այն, մեր ընկերներին մեր գլխին լրտեսներ են նշանակել: Ինչ-որ խօսում ենք՝ ասում են Խնիաթեանին, նա էլ յայտնում է հոգաբարձուներին: Մենք ինչ ենք անում, մենք ոչինչ չենք անում:

Յետոյ աշակերտները միմեանց ետեից պատմեցին մի քանի վրդովեցուցիչ դէպքեր: Անցեալ օրը Մարաֆեանը գիշերօթիկների համար թութ էր գնել իւր փողով: Վերակացու Դիլրիեանը տեսել էր թէ չէ՝ առել էր թութը նրա ձեռից և ամանով թափել Մարաֆեանի

զլիսին։ Այսօր էլ Խնիաթեանը աշակերտներին ասել է. զլու եմ. խօսք էք կապել վերակացուներին ծեծելու, խառնակիչների ազգանունները ծոցատերումն նշանակել եմ, որէոք է հոգաբարձութեանը յացտնեմ, որ բոլորին վոնդի դպրոցից»։

— Բայց ճշմարին է, կամեցել էք ծեծել։

— Մտքներովս էլ չէ անցել, — պատասխանեց Մարաքեանը։

— Այն, մոքներովս էլ չէ անցել, — կրկնեցին միւսները։

— Մենք միայն Զալբամեանի մասին ենք խօսել մեր մէջ։ Պարոն տեսուչ, նա մաքուր մարդ չէ, անպիտան մարդ է, բայց ծեծելու մասին խօսք չէ եղել։

— Այն, Զալբամեանը անպիտան մարդ է։

— Կեղտուու է։

— Անբարոյական է։

— Լաւ, բաւական է, — ընդհատեց Դիմաքսեանը մեղմ ձայնով, — շատ ուրախ եմ, որ ծեծելու մասին չէք մտածել։ Դա վայրենութիւն կը լինէք, այդ տեսակ բաներ երբէք չ'անէք։

Բայց պատգամառները գրգռուած էին։ Նրանք միաբերան պահանջեցին, որ Զալբամեանը հեռացւի դպրոցից։ Հակառակ դէպքում, ասացին, թէ ստիպւած կը լինեն դիմել այդ վայրենի միջոցին։

— Այն, կը ծեծենք նրան։

— Անպատճառ կը ծեծենք։

— Կը ջարդենք։

— Եթէ դուք թոյլ կը տաք։

— Այն, եթէ դուք թոյլ կը տաք, պարոն տեսուչ։

— Մենք ձեզանից ենք միայն վախենում։

— Մենք միայն ձեզ ենք յարգում...։

Մէկը, մի շիկահիր պատանի, մինչև անդամ բռունցքը սեղմելով, մի քանի քայլ առաջ դրեց այնպէս, որ, կարծես, նոյն վայրկեանին պատրաստ էր յարձակել նոյն իսկ Դիմաքսեանի վրայ։

— Այն էլ ասա, այն էլ ասա, — շշնչացին մի քանիսը Մարաքեանի ետևից։

Առաջնորդ-պատգամաւորը դարձեալ նայեց դդակին, շապիկի փեշերը ուղղեց և արտասանեց։

— Պարոն տեսուչ, մի բան էլ կայ։

— Ի՞նչ է:

— Զեղ վրայ էլ լրտես է նշանակւած:

— Ի՞նձ վրայ, մի է նշանակել:

— Զենք իմանում, միայն դուք ինչ-որ աշակերտների մօտ խօսում էք, պատմում են սրարոն Խնիաթեանին:

Դիմաքսեանը չը կարողացաւ իւր զարմանքը թաղցնել, բայց, միևնոյն ժամանակ, չը հարցրեց, թէ ով է իւր վրայ լրտես նշանակւած: Առհասարակ նա չը թողեց այդ մասին երկար խօսել:

— Այժմ ինձանից ի՞նչ էք պահանջում, — հարցրեց նա:

— Խնդրում ենք, որ դուք մեզ պաշտպանէք: Մենք եթէ մինչեւ օրս անկարգութիւն չենք արել, ձեզ յարդելուց չենք արել: Մենք զիտենք, որ դուք մեզ սիրում էք, թոյլ տւեք, պարոն տեսուչ, մենք նրանց կը խրատենք:

— Այն, կը խրատենք:

— Զարդ ու....

— Սաւ, լոեցէք: Ի՞նչ ասացի ձեզ. երբէք թոյլ չեմ տալ ձեզ այդ տեսակ վայրենութիւն: Եթէ ինձ մօտ խորհրդի էք եկել, շատ շնորհակալ եմ: Այն, ես ձեզ սիրում եմ, ուրեմն դուք էլ լսեցէք իմ խորհուրդը և կատարեցէք: Ահա ինչ. գնացէք, հանգիստ շարունակեցէք ձեր դասերը, քննութիւնները վերջացրէք: Արձակուրդներից յետոյ, ես յուսով եմ, ձեր դրութիւնը կը փոխի:

Նա կամենում էր առ ժամանակ խաղաղացնել բորբոքւած սրտերը, բայց այդ շատ էլ դիւրին բան չէր: Պատանի պատգամուորները այնչափ գրգռւած էին, որ տեսչի հանդարա յորդորները նրանց աւելի վրդովեցնում էին: Վերջապէս, Դիմաքսեանը խոսացաւ անպատճառ և շուտով միջամտել հոգաբարձութեան առաջ նրանց մասին, և պատանիները հրաժեշտ տւեցին, կրկնելով:

«Ձեր խաթրու կը համբերենք»:

XXI

Մի քանի օր անցած դպրոցում լուր տարածւեց, թէ տեսուչը աշակերտներին յորդորում է ապստամբել: Պատմում էին, թէ այս նպատակով նա իւր մօտ է կանչել մի խուժի շարամիտ առաջաւորներ և ապստամբութեան հրահանդը տւել:

Խնիաթեանը պնդում էր, թէ առաջին յարձակումը իւր վրաց պէտք է լինի, պասն զի՞ւ Դիմաքսեանի գլխաւոր հակառակորդը ինքն է: Նա ամեն ճիգ գործ է դրել այդ ժխելացնորի անմիտ, մղասակար դաշտափարներին առաջն առնելու նա կամեցելէ զպրոցը և բրկել անկումից: Նաու հասկանալի է, որ Դիմաքսեանը չը պիտի մարսէր նրան: Բայց նա երկու մարդ չէ, պատրաստ է ննահատակ-ւել իւր համոզմունքներին և նորագոյն սերնդի փրկութեան: Համար:

Վերակացու Զալբամեանը բակի մի անկիւնում գտել էր մի կոյտ քարեր: Նա երդում էր, թէ խառնակիչներն են վազօրօք այդ քարերը պատրաստել ապստամբութեան համար:

Հինգերորդ դասաւոան: Արտես Մարբազեանը երաշխաւոր էր Զալբամեանի ասածի ճշմարտութեանը: Իւր կողմից նա հաւատացնում էր, թէ մի քանիսի մօտ մինչև անգամ ատրճանակ է նկատել: Խակապէս նա վեցերորդ դասաւոան աշակերտ Աֆրիկեանի գըրպանում մի բան նկատել էր, բայց հաստատ չը գիտէր ատրճանակ է թէ վարունգ, որ Աֆրիկեանը շատ էր սիրում և միշտ գաղտնի ուտում էր:

Հոգաբարձութիւնը անմիջապէս խառն նիստ հրաւիրեց ուսուցիչների հետ: Երեկոյ էր, ամենքը սպասում էին նախագահի գալատեանը: Դիմաքսեանին ներկայացած վեց պատգամաւորներին փակել էին առանձին առանձին սենեակներում: Նրանց պէտք է հարց ու փորձի ենթարկէին ջոկ-ջոկ, ուստի անջատել էին միմեանցից, որպէսզի խօսք մէկ անելու միջոց չունենան:

Գիշերօթիկներին վազօրգք քշել էին ննջարանները, դռները փակել էին և պահապան դրել մի հաստաբազուկ մշեցու, որ չը գիտեր, թէ այդ ինչ իրարանցում է սկսւել: Հայրենիքի տխուր վիճակից վշտացած հայաստանցին այնքան ծարաւ էր թշնամուարիւմին, որ երևակացում էր, թէ ամեն մի գիշերօթիկ մի եղիդ է: Եւ, կարծես, պատրաստ էր մահակը զգարներ այն գլխին, որ կը յանդգնէր դռներից դուրս ցցել:

Նիստին հրաւիրւածները շփոթման մէջ էին: Շտապով անցնում էին մի սենեակից միւս սենեակ, խորհրդաւոր կերպով միմեանց ականջին շշնչալով ապստամբութեան մանրամասն պարագաները:

Վէքիլեանը չափից դուրս վախեցած էր: Խնիաթեանը նրան հաւատացրել էր, թէ ապասամբութեան հրահանգի մէջ նրա անունը երկրորդ տեղն է բռնում: Նա հերթակալ էր: Իբրև թէ Հարամիտները պէտք է սպասէին նրա գալստեանը և Խնիաթեանից յետոյ նրան հարւածէին:

—Ի՞նչ յանդգնութիւն, ի՞նչ յանդգնութիւն, —կրկնում էր նա անդադար, —բայց ի՞նչպէս բաց արեցիք դաւադրութիւնը, պատմեցէք, պատմեցէք:

Սակայն ոչ ոք հասաւառ : Ը գիտէր, թէ գդաւադրութիւն, եղել է, թէ չէ: Բանն այն էր խսկապէս, որ նախընթաց օրը վերակացու Զալբամեանը Մարաքեանից հարցրել էր, արդեօք ի՞նչու երկու օր առաջ նա իւր ընկերների հետ ներկայացել էր տեսչին: Մարաքեանին այդ հարցը շփոթեցրել էր, որովհետեւ նա երևակայիլ չէր կարող, թէ իւր պատգամաւորութիւնը, բացի հինգ աշակերտներից, ուրիշ մէկին յայտնի է: Զալբամեանը սահպել էր նրան խոստովանել, սպառնացել էր և վերջը, տեսնելով, որ ոչինչ չէ ազդում, մի կեղոսոց մշշոց էր տւել Մարաքեանին: Տաքարիւն պատանին, չը կարողանալով իրան զսպել, ապսակել էր կոպիտ վերակացուին, տւելացնելով.

«Ձեզ բոլորին էլ պէտք է այսպէս պատժենք»:

Զալբամեանը աղմուկ էր բարձրացրել, և ամենքին համոզել, որ ահադին դաւադրութիւն կայ աշակերտների մէջ ուսուցիչների և հոգաբարձութեան դէմ:

Իսրաթեանը շատ սաւն էր պահում իրան: Նա ընդդէմ էր ամեն մի ծայրայեղ միջոցի: Նա ասում էր, թէ ըմոքերի խառնակութեան ժամանակ սառնասրտութիւնը ամենազօրեղ զէնքն է մարդու համար: Նա պնդում էր, որ ամեն ինչ պէտք է գաղտնի կերպով անել, գործը չը պիտի հռչակել, եթէ ոչ ըրպրոցի ճակատագիրը կարող է վտանգի հնմարկւել: Սակայն Վէքիլեանը, Ամբակում Աֆանասիեւիչը և ուրիշները համոզել էին նախագահին, որ տեսչին հրաւիրէ ժողովի նիստին, ամենքի առաջ հարց ու փորձ անէ և յետոյ յանդիմանէ:

«Ի՞նչ երեելի տեսարան, ի՞նչ էֆէկտ, մոածում էր Վէքիլեանը, տեսնել Դիմաքսեանին մեղադրեալի նստարանի վրայ, ամօթահար և ճնշւած իւր յանցանքի ծանրութեան տակ»:

Սկզբում Դիմաքսեանը զարմացած և շփոթւած էր: Նա լսել էր անհեթեթ լուրը, բայց խառն ժողովի մասին տեղեկութիւն չունէր:

Նրան վերին աստիճանի քաղաքավարի կերպով հրաւիրեցին նստել ընդհանուր սեղանի շուրջը, որ ծածկւած էր կանանչ մանուգով: Բայց նա հասկացել էր բանի էութիւնը, գիտէր, որ ամենքը իրան մեղադրեալ են համարում: Նա մի հայեացք ձգեց հանդիսաւոր ժողովի վրայ, մի կէս արհամարհական և կէս բարկացոտ հայեացք, և առաց.

—Ոչ, ես այդ սեղանի շուրջը չեմ նստիլ:
Եւ, մի աթոռ վերցնելով, նստեց ժողովից հեռու, պատի տակ: Նախագահն, իւր դէմքին տալով լուրջոբայց ներողամիտ արտայալտութիւն, մի համառօտ ճառով բացադրեց ժողովի նպատակը:
—Ոչ վասն պատժելոյ զմեղաւորս, այլ վասն ամրառնալոյ զմեղս,—աւարտեց նա իւր ատենաբանութիւնը Այսմաւուրքի թէ Հարականի խօսքերով, ոչ ոք չը գիտէր:

Դիմաքսեանը լուռ լսում էր: Այժմ նա բոլորովին հանդիսա էր, այնպէս, որսկէս երբէք չէր եղել այդ մարդկանց ներկայութեամբ: Նրան չէր վրդովեցնում մեղադրեալի վիճակը, որի մէջ դրել էին նրան: Նա այդ բանի վրայ մտքում ծիծազում էր: Նրան զայրացնում էր այդ հասարակական ներկայացուցիչների վարմունքը առհասարակ որպէս վարմունք:

Երբ նրան հարցրին—արդեօք ճիշդէ է, որ նա դրդել է աշակերտներին ապատամբւել—գլուխը ցաւակցաբար շարժելով, արտասանեց.

—Եթէ իմ պատասխանը ձեզ գոհացնէր, անկասկած այս ժողովը տեղի չը պիտի ունենար: Ուրեմն ինչն էք դիմում ինձ, շարունակեցէք ձեր դատաստանը:

—Մէկիկ մէկիկ առաջ բերէք յանցաւորներին, —հրամայեց նախագահն:

Զալբամեանը աներեսութացաւ և մի րոպէ չ'անցած ներս բերեց մի տասնութ տարեկան պատանի: Դա վեց պատգամաւորներից մէկն էր:

—Այդ դժւ ես, Դարբինեան, ճանաչում եմ, որդեակ, պատմի՛ր յանցանքդ:

Տիրեց ընդհանուր լուռթիւն։ Երեսուն ու երեք հայեացքներ միաժամանակ բևեռւեցին սպասանիի վրայ։ Հանդիսաւոր ժողովը նրան շփոթեցրեց։ Նա գունամ էր, կարմրեց, դողաց և միայն կարողացաւ արտասանել.

— Ներեցեք...

— Կը ներենք, որդի, ասա մեղքդ, մի՛ վախենար։ Մենք քեզի չենք մեղադրիլ, ոու տհաս ես, ոզի ոչ զիտես զոր ինչ զործեսա։ Անշուշտ քեզի այլ և այլ չօրդորողներ եղել են, չիշատակիր անունները, տեսնենք։

— Ես չը զիտեմ, ես չեմ խօսել, Մարաքեանը և Աբիկեանը զիտեն...

— Երեք օր առաջ, այսինքն ամսոյս վեցին, օրն հինգշաբթի, առաւտօհեան ասան ու մէկ ժամէն ցտասներկու ու կէս ժամը, մուխ մօտ եղել էք։

— Պարոն տեսչի մօտ։

— Այսպէս։ Պարոն քարոզուզար. «Եղել ենք պարոն տեսչի մօտ»։

— Ինչո՞ւ համար եղել էք այնտեղ։

— Բողոքելու։

— Ումի՞ գէմ։

— Վերակացուների։

— Այսպէս։ Պարոն քարոզուզար. «բողոքելու վերակացուների գէմ»։

Վէքիլեանը ինչպէս իրաւաբան-փաստաբան հարկ համարեց նախազահի խօսքը ընդհատել։ Նա մի քանի քննական հարցեր տուեց մեղադրեալին։ Պատանին այնքան շփոթւեց, որ ամեն քայլում ինքն իրան հակասում էր։ Վերջապէս, նա արտասեց, Թեկից բռնելով՝ նրան դուրս տարեցին։

Երկրորդ պատգամաւորը եղելութիւնը պատմեց աւելի անխոռվ։ Որքան նրան զանազան հարցերով նեղն էին դցում, միշտ կրկնում էր։

— Պարոն տեսուչը մեզ խրատում էր հանգիստ մնալ։

Խսկ այդ միջոցին տեսուչը այնպէս էր նատել, որ քննւողները չը զիտէին անգամ, թէ նա ներկայ է։

Նոյնը կրկնեցին երրորդ, չորրորդ և հինգերորդ աշակերտները։

Վերջապէս, հերթը հասաւ դլխաւոր պատգամաւորին։ Մարա-

քեանը անվեհեր ներս եկաւ, դլուխը բարձր պահած, հպարտ, ինչպէս վայել էր օրւաց հերոսին: Երկում էր, որ նա արդէն ամեն պատիժ աչքի առաջ էր առել: Ուստի իրան տւած քննուկան հարցերին նա պատասխանում էր համարձակ, աներկիւղ և մինչև անգամ կոպիտ եղանակով:

Նրբ հարցրին տեսչի մասին, նա դրականապէս պատասխանեց.

—Եթէ պարոն տեսուչը չը լինէր, մենք անպատճառ պէտք է պատամբւէինք:

Ժողովը շշնջեց: Վէքիլեանը փափսսց Բարաթեանի ականջին. բամենքը կաշառւած են:

Այն ինչ Մարաքեանը, դառնալով իրան ներս բերող վերակացուին, աւելացրեց.

—Ենորհակալ եղէք պարոն Դիմաքսեանից, որ մի ապտակով միան ազատուցիք, թէ չէ՝ ձեր ոսկորները ջարդ ու փշուր պէտք է անէինք...

—Դնուրս բերէք Բեհեզզերուղի զաւակին, —գուեց նախագահը համբերութիւնը հատած:

Վերակացուն յանդուդն աշակերտին դուրս մղեց: Ժողովական-ները շփոթւած նայում էին միմեանց:

Վէքիլեանը մինչև գոները աչքերով ուղեկցեց աշակերտին: Նա վախենում էր՝ մի՛ գուցէ Մարաքեանը գրավանում մի բան ունէ և իսկոյն կ'արձակի նրա գլխին: Յետոյ նա լուսամուին նայեց և տեղը փոխեց. չէ որ ապստամբը կարող էր դրսից էլ քարեր արձակել:

—Պարոն քարտուղար, «ձեր ոսկորները ջարդ ու փշուր կանէինք» բառերը չը մոռանաք: Այժմ, զերամեծար տեալք, կարծեմ այսօրւաց արտաքոյ կարգի նիստը պէտք է աւարտած համարել:

Դիմաքսեանը նստած էր դեռ լուռ, ոչինչ չէր ասում: Նա գլուխը հպարտ պահած՝ հեգնօրէն ժամանում էր և արհամարհական հայեացք ձգում իւր նախկին ընկերակիցների վրաց:

Բարաթեանը, որ ամօթահար էր եղել, մտածում էր՝ ինչպէս մի կերպ դուրս գայ անյարմար դրութիւնից:

—Սրբազն հայր, —արտասանեց նա, որքան կարող էր իւր դէմքին տխուր լրջութիւն տալով, —նախ քան ժողովը արձակելը, պէտք է յարգելի տեսչին խնդրել, որ ներկայ թիւրիմացութիւնը

բացազրէ: Այն, ես կարծում եմ, որ այս բոլորը թիւրիմացութիւն է, ուրիշ ոչինչ: Մեր հոգեկան տրամադրութեանը և մեր բարի նորատակին անտեղեակ մարդը կարող է կարծել, որ այստեղ մենք մի տեսակ դատաւորներ ենք, իսկ մեծապատիւ պարոն Դիմաքսեանը մեղադրեալ: Այն ինչ ոչ դատաստան կայ և ոչ քննութիւն: Մեր բոլորի ցանկութիւնը մի բան է. վերացնել մեր ազգային թանգարին հիմնարկութիւննից մի անգամ ընդ միշտ բոլոր անհաճոյ երկպատակութիւնները: Ես համոզւած եմ, որ մեր մեծապատիւ պարոն տեսումը մեզանից աւելի է փափազում, որ այս հիմնարկութիւնը ազատ լինի տեսուր անցքերից: Ուրեմն խնդրենք յարգելի պարոն Դիմաքսեանին, որ նա մեզ մի ելք ցոյց տայ:

Այդ միջոցին Դիմաքսեանը ոտքի էր կանգնել: Նրա աչքերի մէջ փայլում էր կատաղութիւնը կծու հեգնութեան հետ: Նրա երեսի բոլոր մկանունքները դողում էին:

Ամենքը նայեցին նրա կողմէ: Վէքիլեանը ինչոր շշնջաց նախագահի տկանջին: Նախագահը նայեց Բարաթեանի երեսին, և նրանք հայեացքներով խօսեցին միմեանց հետ:

Խնդրին այն էր, որ ամենքը անախորժ դրութեան մէջ էին, ամենքը զգում էին մի տեսակ ամօթ Դիմաքսեանից և չը զիտէին, ինչպէս վերջ տալ տեսարանին:

Այն ինչ՝ Դիմաքսեանը, խորին արհամարհանքավ լսելով Բարաթեանի ասածները, քանի մի վայրկեան լուռ նայեց ամբողջ ժողովին և ազա զօրեղ և խրոխա ձայնով արտասանեց.

—Ողորմելիներ:

Այս մի հասիկ բառը, արձակւած վրդովեած և աներկիւղ կրծքից, ցնցեց ամենքին, կաշիանդեց բոլորի ուշքը: Մեղադրաւածը վայրկենաբար նրանց աչքում փոխեց մի զօրաւոր ախաննի, որ ինչպէս մարմնացած վրիժառութիւն կանգնել էր նրանց գլխին, աչքերից կայծեր ցայտեցնելով:

—Ողորմելիներ,—կրկնեց նա, —այն, ուրիշ անւան արժանի էն այն մարդիկ, որոնք այսօրւայ տիսուր տեսարաննի հեղինակներն են: Ի՞նչ էիք կամենում: պատմել ինձ, թէ պաշտպանել դալրոցը: Արդեօք ի՞նչ մի չար վտանգից կամ ում դէմ էիք ուղում սրաշուպանել — մի խումբ տկար պատանիների: Ի՞նչ է նրանց մեղքը. միթէ այն,

որ չեն դիմանում դպրոցում տիրող բռնութիւններին, վրդովւմը են ընկերական զրպարտութիւնների, քսութեան և լրտեսութեան դէմ: Նթէ դա է նրանց մեղքը, այսօրւայ նիսար մի անջնջելի արատ կը մնայ թէ հոգաբարձութեան և թէ ուսուցական այս խորի վրայ: Խնձանից պահանջում են, որ ես խօսեմ: Ես գիտեմ այդ առաջարկութիւնը ինչ զգացմունքներից է թելադրուում: Քողը շատ թափանցիկ է, և ՞րա տակից երեսում է առւտ քաղաքագիտութեան պատկերը: Կամենում էք, որ ես, ինչպէս մեղադրուած, պաշտպանմէմ ինքս ինձ: Երբէք իմ հակառակորդները այդ պատուին չեն արժանանալ: Կարծում էք, ես ինձ վիրաւորւմծ եմ համարում: Քաւ լիցի: Իմ հակառակորդները պարզ տեսնում են, որ իրանց նետը նպատակին չը հասաւ: Մի քանի անչափահաս, անփորձ, անպաշտպան պատանիներ նրանց սոխապեցին ամաչել, կարմրել: Յօ, որքան նրանք այս րոպէիս խղճալի են նոյն իսկ իրանց աշքում...

Նախագահը զանգահարելով, ճառախօսին էկարգի: Հրաւիրեց: Դիմաքսեանը թաշկինակով սրբից ճակատի քրատիքը և, հպարտութեամբ նայելով ժողովին, շարունակեց.

— Այսպէս ուրեմն, իմ հակառակորդները իրանք իրանց պատասխանը ստացան: Նրանք տեսան, որ ոչ մի մեքենայութիւն, ոչ մի զրպարտութիւն ինձ չէ կարող արատաւորել, միայն կարող է կորսոի ենթարկել մի ամրող հիմնարկութիւն: Բայց ինչ փոլթ նրանց դպրոցի վիճակը. նրանց միակ նպատակն է ինձ յաղթւած և ստորացած տեսնել... Բաւական է, ես չեմ կամենում աւելի խօսել: Բայց այսօրւայ եղելութիւնը, պարոններ, ես վարագոյրի ետեսում չեմ թողնիլ: Ասպարէզ կը հանեմ նրան իւր բոլոր մանրամասնութիւններով: Կարծում էք, վրէժխնդիր լինելու համար. կրկնում եմ, ոչ և ոչ: Ես այդ կանեմ, որպէս զի մեր միամիտ հասարակութիւնը իմանայ, թէ ինչ է կատարուում իւր մի ազգային հիմնարկութեան մէջ, որպէս զի նա ճանաչի այն մարդկանց, որոնց իւր գործերի զեկավար է ընտրում, որոնց ճայնին ականջ է դնում և որոնց մոքերին շատ անգամ ծափահարում է: Գալով իմ պաշտօնին, ինձ շատ լաւ յայտնի է իմ հակառակորդների նպատակը: Նրանք փափագում են, որ ես կամաւոր կերպով հեռանամ

կուի ասպարիզից, որպէս զի յետելիցո գւարձանան, ծիծաղեն բայց յայտնում եմ այդ պարսններին. ես իմ ազատ կամքով երբէք չեմ հեռանալ իմ պաշտօնից, մինչև որ հոգաբարձութիւնը ինքը ինձ չասի. «Հեռացիր, որովհետեւ դու վնասակար ես մեզ համար»:

Արտասանելով այս խօսքերը, նա մի անդամ էլ արհամարհանքով և զգւանքով նայեց իւր նախակին ընկերների երեսին: Յետոյ ծանր, հոգարտ և հանդարտ քայլերով, միայն սաստիկ գունատւած, նա դուրս եկաւ գահճից:

Նոյն վայրկեանին գերհանական մանկավարժ Խնիաթեանի ղեկքի վրայ փայլեց մի ուրախ ժպիտ:

XII

Չը նայելով Դիմաքսեանի սպառնալիքին, հետեւալ օրը հոգաբարձութիւնը առանձին նիստում վճռեց նրան թողնել իւր պաշտօնում մինչև պայմանաւորւած ժամանակի լրանալը, այսինքն մի տարի: Այսպիսով նա կամեցաւ մեղհացնել տեսչի սիրաը, որ նա եղելութիւնը հրապարակ չը հանի:

Բայց մի շաբաթ անցած դուրս եկաւ Դիմաքսեանի մերկացնող զրութիւնը վեց աշակերտների դպրոցից արձակելու մասին:

Հոգաբարձութիւնը պատասխանեց նրան՝ սառն պաշտօնական ձևով: Երեսում էր, նա աշխատում էր իրողութիւնը քօղարկելու Փաստեր չէր բերում, հակառակորդի ասածը հերքում էր խօսքերով:

Բայց ասպարէզ եկաւ Վէքիլեանը և կռիւը այլ կերպարանք ստացաւ:

Դիմաքսեանը այժմ բոլորովին ընտելացել էր անձնական հարւածներին: Հակառակորդների յարձակումները նրան չեն վշտացնում, այլ գրգռում էին, նրա բորբոքւած սրտի մէջ աւելացնելով կիզանուած հեղուկը: Ամեն կերպ աշխատում էին նրան ցոյց տալ իբրև մի վնասակար, անսատուած, կործանիչ մարդ, որից մեծ վտանգ է սպառնում հասարակութեանը:

Խնդիրը միայն դպրոցի մասին չէր: Մասնաւորից սկսելով, Դիմաքսեանը այժմ հարւածում էր հասարակական ընդհանուր ախտերը: Առանձին ախտժամկով և կատաղութեամբ նա մերկացնում էր կրթւած զասի սխալ և վնասակար ուղղութիւնը, միշտ իրեւ-

օրինակ աչքի առաջ ունենալով հարաթեանին և Վէքիլեանին Այժմ նրա կուրսը հասարակութեան դէմ էր:

Այսպէս անցան ամիսներ, անցան ամբողջ աշունը ու ձեռուք Վէքապէս, հասաւ գարունը և հարցաքննութիւններից յետոյ Դիմաքսեանը արձակւեց պաշտօնից: Նրա տեղը նշանակւեց Խնիս-թեանը:

Նոյն միջոցին Դիմաքսեանը դարձեալ հեռագիր ստացաւ, թէ հայրը մահամերձ հիւանդ է:

Նա շտապեց հայրենիք և այս անդամ ծերունուն մեռած գտաւ: Գոյրերը հանգուցեալի թաղումը մի քանի օրով յետաձել էին, աղասելով իրանց եղբօր գալասեանը:

Երեք օր տեսեց սգաւոր հանդէսը: Առաւօտ երեկոյ քաղաքացիները խումբ-խումբ գալիս էին՝ իրանց ցաւակցութիւնը Արսէնին յայտնելու: Վէքապէս, լնդհատուցին ձանձրալի ացցելութիւնները, և որբայած որդին ժամանակ ունեցաւ հետաքրքրելու հօր գործերով:

Հանգուցեալը կատակ չէր թողել:

Նա մինչև յետին շունչը չէր հաւատացել մահւանը և մինչև անդամ կուել էր նրա մասին խօսողների հետ:

Աղջկերանց հետ նա տեսակցութիւն էր ունեցել մեռնելու նախընթաց օրը: Ոչ մի խօսք չէր ասել նրանց իւր կարողութեան մասին: Մեռնելուց մի ժամ առաջ ցիշել էր Արսէնին, մեղաղրելով նրան, թէ մոռացել է ծերունի հօրը: Նոյն ժամին նա վռնդել էր բժշկին, բարկանալով, որ նրա ղեղերը չեն ազդում: Հոգեարքի ժամանակ կուել էր մահւան դէմ, հայոյնել էր նրան ամեն տեսակ խօսքերով: Քահանան կանչւել էր վերջին բռուէին, սուրբ հաղորդութիւնը գդալով էին ածել հանգուցեալի կոկորդը:

Այս բոլորը արտասուքը աչքերին պատահեց նրա աւագ քոյրը, կրկնելով.

«Յամառ մարդ էր, յամառ էլ մեռաւց:»

Երկու շաբաթւաց ընթացքում Դիմաքսեանի համար պարզեց գործերի գրութիւնը: Երկաթեաց անդուկի մէջ, բացի հին մուրհակներից և մի քանի կապ պայմանագրերից, նա ոչինչ չը գտաւ: Պարզ էր, որ հաւատարիմ Սարիբէկի խոնաւ ձեռը այնուեղ էլ մտել էր: Խակ թէ հանգուցեալը զուափող ունեցել էր, այդ երեաց

նրա մի փոքրիկ ձեռատեռից, որ կառավարիչը մոռացել էր թաղց-նել: Այսուեղ նշանակւած էին ստացւած եկամուտները և ծախսերը:

Անհետացել էին և այն բոլոր ոսկեղէնները ու ակնեղէնները, որ մի ժամանակ Արսէնի մօր գարզերն էին կազմում և որոնց ծերունին խնամքով պահում էր, ինչպէս մի սրբութիւն:

Կողոպտուաը հաստատելու և յանցաւորին պատժելու համար պէտք էր դիմել դատաստանին: Տեղական փաստաբաններից մէկը առաջարկեց իւր ծառայութիւնը: Դիմաքսեանը մերժեց: Նա զզում էր դատաստանական դործերից և չէր ուզում ժամանակը դո՞նել անվերջ վէճների: Բացի դրանից, նա խնայում էր Սարիբէկի ութ հոգուց բազկացած ընտանիքին: Նա անմիջապէս վոնդեց կողոպտիչին, փորձեց ինքը անձամբ կառավարել դործերը: Սակայն քիչ ժամանակ անցած տեսաւ իւր տնտեսական ապիկարութիւնը, նա, որ թէօրիհայով միայն գիտէր ինչ ասել է տնտեսութիւն:

Նա վճռեց սահմանափակել դործերը: Ժառանգութիւնը օրինական կերպով հաստատելուց յետոց, կալւածների մի մասը նւիրեց քոյրերին: Ացդպիսով նա ազատեց նրանց մի մշտական նախատինքից, որ խեղճ կանայք կրում էին ամուսիններից իրանց ժլատ հօր պատճառով:

Նրա եռանդուն միտքը անգործ չը մնաց հայրենի քաղաքում: Նա ուսումնասիրում էր գաւառական կեանքը, հաւաքում էր տեղեկութիւններ ժողովրդի բարոյական վիճակի մասին: Ամեն օր նա շրջապատուած էր տեղական երիտասարդներով, որոնք արդէն իրադործել էին նրա առաջին գալստեան ժամանակ առաջարկած լնկերութիւնը: Նրա նոր կուրը մեծ հետաքրքրութիւն էր շարժել: Նրա կողմնակիցները ացժմ աւելի որոշ և աւելի լնդարձակ շրջան էին կազմում: Բայց շատացել էր և հակառակորդների թիւը:

Պատահել էին մի քանի խոշոր ընդհարումներ երկու հակառակորդ խմբերի մէջ: Նկատել էր, որ ինչոր կատարւում է Թիֆլիզում, նոյնը անդրադառնում է և փոքրիկ քաղաքների կեանքի վրայ: Այստեղ ևս տիրում էին նոյն երկպառակութիւնները բոլոր հասարակական խնդիրների մասին: Տարբերութիւնը միայն մէկ էր. կեանքը աւելի սահմանափակ լինելով, փոխադարձ խռովութիւններին էլ աւելի նեղ հողի էր ներշնչում: Մարդիկ աւելի աններողամիտ

էին, աւելի կրքոտ և աւելի յիշաչար: Նատ անգամ վէճերը հասնում էին սարսափելի ծայրայեղութեան: Հակառակորդները պատրաստ էին մողի պատերազմը փոխել բուռնցքի կուի և միմեանց գանդը ջարդել և դուրս թափել այնոեղից այն ուղեղը, որ յանդգնում էր ուրիշ կերպ դատել քան թէ իրանցը:

Այս հանգամանքը Դիմաքսեանի համար հետաքրքրական էր իւր բնորոշ կողմերով: Նա տեսնում էր, որ մարդը որքան քիչ է կրթած, այնքան քիչ է հայբերող, այնքան աւելի կատաղի է, սակայն, միևնուն ժամանակ, այնքան աւելի պարզ և անկեղծ է իւր համակրութեան և հակակրութեան մէջ: Բայց ամենահետաքրքրականը նրա համար ուրիշ բան էր: Նա նկատում էր հասարակութեան մէջ մի նոր երևոյթ, այն է՝ կռիւ երկու սերնդների մէջ—հնի և նորի: Դա հայրերի և զաւակների կռիւ էր: Մի կռիւ, որ հայ կեանքի մէջ առաջին անգամն էր երևան գալիս այնպիսի խիստ և այնպիսի որոշ կերպով:

Եւ երբեմն իւր առանձնութեան մէջ նա մտածում էր, արգեօք թէ հետեւանք կ'ունենայ այդ բոլորը: Նրա առջև պատկերանում էր կեանքի մի բարոյական քաօս, ուր առաջին հայեացքով անհնարին էր մի բան որոշել: Որդին դիմադրում է հօրը, աշակերտը ապստամբում է ուսուցչի դէմ, ամեն տեղ թարմը, նորաբոյսը և կենդանին բողոքում և դիմադրում է հնին ու թմրածին:

Արդեօք այդպիսով ճիւղերը չեն բաժանւիլ արմատից, և դարաւոր բունը յանկարծ չի չորանալ:

Այս միաքը վայրիկենաբար սարսափեցնում էր նրան: Նա սկսում էր վախենալ ծագած պատերազմից:

Բայց անցողիկ երկիւղը տեղի էր տալիս վարդագոյն յոյսերին: Երեւակայութիւնը առաջնորդում էր նրան դէպի մի բարւոք ապագայք: Այսոեղ նրա մէջ երեւան էր գալիս մի տեսակ օպտիկմիսու և իդէաիստ Մսերեան, սակայն այլ գոյներով: Նա լիովին իրագործւած չէր նախագուշակում մարդկութեան լաւագոյն մասի իդէալը: Նրա խելքը դատում էր համեմատական մեթոդով: Նա տեսնում էր անընդհատ, յարատե պատերազմ դարերի ընթացքում, սերնդից սերունդ և սերունդների մէջ: Երբէք չի դադարել հնի և նորի այդ պատերազմը, կը փոխւեն միայն մարդիկ, կը փոխւեն նրանց զէն-

քերը, փոխագարձ դիմադրութեան եղանակը և միջոցները: Բայց միշտ յաջորդ սերունդը իւր կեանքի քաղաքակիրթ կողմերով կը գերազանցի նախընթաց սերնդից... և այսպէս անվերջ...

Կրկին նա ոգեւորւում էր, կրկին սիրտը լցւում էր քարողելու, գործելու և անընդհատ մաքառելու անհուն եռանդով և ձգուում ներով:

Չմեռուայ վերջին նա կամեցաւ հեռանալ հայրենի քաղաքից: Նրան զուս փող էր հարկաւոր ասպրելու և գործելու համար: Նա ծախեց հայրական կալւածներից մի փոքրիկը, միւսների կառավարութիւնը յանձնեց Հարիզեան ազդանունով մի երիտասարդի: Դա նրա նախսկին ընկերներից մէկն էր, որ մասնագիտաբար ուսումնասիրել էր գիւղասնտեսութիւնը: Նա լիազօր իրաւունք տւեց Հարիզեանին կառավարել իւր կալւածները ինչպէս կամենում է, եկամտից մի որոշ տօկոսիք յատկացնելով նրան:

Նա վերադարձաւ Թիֆլիզ: Այսուեղ նրա բացակայութեան ժամանակ կողմնակիցները շարունակել էին ընդդիմադրել հակառակորդներին կեանքի զանազան խնդիրներում: Բայց կոիւը առաջւայ եռանդով չէր կատարել:

Մսերեանը բարկացած պատմեց, թէ երեան են եկել անկոչ պաշտպաններ, որոնք իրանց տգիտութեան շնորհով գործին աւելի վնասում են քան օդնում:

Ոչինչ, —ասում էր նա, —ինձ համար այնքան ատելի և ոչինչ այնքան վտանգաւոր չէ, որքան ախմարութիւնը իմաստունի դիմակով: Ամենաբարձր գաղափարը տգէտի շրթունքներից կարող է ծաղրելի հնչել: Զօրեղ զործի համար զօրաւոր զէնք է հարկաւոր: Զգուշացիր անմիտներից, մի' հաւատալ անկիրթների խելքին և ոչ էլ անկեղծութեանը: Բարոյական անխախտ սկզբունքները ձեռք են բերուում միայն մտքի յարատե գործունէութեամբ: Տգէտի օրէնքը նախապաշարմունքներն են և արտաքին ոյժը: Լուսամիտ մարդու զեկավարը միմիայն իւր խելքն է և սիրաը: Մի հաստատամիտ, կրթւած, զարգացած, մտածող բարեկամիդ գերազասիր հարիւրաւոր թերհաս, անկիրթ պաշտպաններից:

Այդ կարճ միջոցում իդէալիստը բաւական ծերացել էր: Նրա մազերը աւելի ճերմակել էին, երեսի խորշերը շատացել:

Նա հաղորդեց, թէ առաջիկայ քաղաքավին ընտրութիւններին կողմանակիցները մտադիր են Դիմաքսեանին առաջարկել, որ իւր քէտուփը զնի: Ցուցակ է կազմած և նրա անունն էլ մոցրած է ընտրելի իրաւասուների շարքը:

Դիմաքսեանը պատասխանեց, թէ ցանկութիւն չունէ քաղաքավին գործերի մէջ խառնել, թէև առաջ ձգտում էր:

—Ես էլ խորհուրդ չեմ տալ, —ասաց Մսերեանը, —լաւ է մի գործի ծառայել և լաւ ծառացել, քան թէ ոյժերը ցրել մի խառնիճաղանձ հասարակութեան մէջ:

Խդէալիսը, ի միջի ալլոց, յայտնեց, թէ օրիորդ Կարինեանը արտասահմանից վերադարձել է:

—Այս: Ի՞նչպէս է, փոխւմը է, —հարցրեց Դիմաքսեանը:

—Նատ:

—Միթէ:

—Ուզում եմ աւել աւելի լաւացել է, թէ արտաքուստ և թէ հոգով ու սրտով: Այս, նա այժմ ինձ աւելի է դուր գալիս: Վերջին դարձւածը Մսերեանը արտասանեց ձայնը ցածացնենելով, կարծես, ինքն իւր համար: Յանկարծ նա ընդհատեց խօսքը օրիորդի մասին և դարձաւ ուրիշ բաների:

Դիմաքսեանը նայեց նրա երեսին և նրա աչքերի մէջ նկատեց մի անսովոր բան...

XIII

Մի անգամ Մսերեանը Դիմաքսեանին խնդրեց միասին այցելել Կարինեանին:

Օրիորդը բնակում էր նոյն տանը և նոյն պառաւ տատի և այրի հօրաքրոջ հետ:

—Աս, շատ ուրախ եմ, —գոչեց նա, դուրս գալով պատշդամը հիւրերին դիմաւորելու:

Արդարեւ, նա փոխւմել էր արտաքուստ: Նրա առաջւայ նիհար այսերը լցւել էին, դէմքի գոյնը աւելի պարզել էր: Սովորական մոավութիւնը տեղի էր տւել աշխուժութեան և կենդանութեան: Նա դարձել էր աւելի արագաշարժ, աւելի համարձակ, միևնուն ժամանակ, նրա ձևերը աւելի տաշւել և կրթւել էին:

Այս փոփոխութիւնը Դիմաքսեանը վերադրեց եւ բռպական ազատ կեանքի ազդեցութեանը: Յիշեց, թէ ինչպէս ինքն էլ աշխոյժ և կենդանի էր այնտեղից վերադառնալիս և որքան այժմ ասիական կեանքի ճնշող պայմանները ազդել են իւր վրայ:

Պառաւը միւս սենեակում հիւանդ պառկած տնքտնքում էր: Այրի Բօլումբաշեանը դարձեալ տանը չէր: Բայց օրիորդը մենակ չէր: Նրա մօտ հիւր կար, և այդ հիւրն էր տիկին Բախտամեանը, որ և շատ զարմացրեց Դիմաքսեանին: Նրանք բարեեցին ինչպէս հին ծանօթներ: Յետոյ տիկինը, թոյլ տալով, որ օրիորդը վերջացնի իւր հիւրերի հետ առվորական հարց ու փորձը, դարձաւ Դիմաքսեանին.

—Ես եկել եմ Աշխենին մի առաջարկութիւն անելու, յոյս ունեմ, պարոններ, դուք էլ ինձ կ'օգնէք:

Այստեղ Դիմաքսեանը առաջին անգամ իմացաւ, որ Կարինեանը տիկին Բախտամեանի մօրաքրոջ աղջիկն է: Կարմրախայտ այտերին լուրջ արտապայտութիւն տալով, տիկինը ասաց, թէ կանանց ընկերութիւնը ուզում է աղքատ աղջկանց համար ուսումնարան բաց անել: Եկել է օրիորդին առաջարկելու, որ նա յանձն առնի տեսչուհու պաշտօնը: Բայց օրիորդը մերժում է:

—Իւր քրոջ խօսքը չէ յարգում, ձեր խօսքը անսպատճառ կը յարգի, օգնեցէք ինձ, պարոն Դիմաքսեան: Բայց ես շատ նեղացած եմ ձեզ վրայ: Առաջինը, ինչու մեր տուն չէք գալիս, երկրորդ, ինչու մեր ընկերութիւնը չէք պաշտպանում մի քանի անկիրթ գրչակների դէմ: Ախ, ինչ գուեհիկ են այդ լրագիր մրոտողները, օգնելու փոխարէն մեզ ծաղրում են ու հալածում: Ի՞նչ լաւ կը լինէր, պարոն Դիմաքսեան, եթէ մի փոքր տրորէիք այդ մարդկանց քինթը: Խեղճ կանացք, խեղճ կանացք, այսպէս է ձեր բաղդր... 0'ո, եթէ իմանաք ինչքան ենք չարչարում: Հիմայ էլ ուսումնարանի հոգսը զցեցին ինձ վրայ: Աշխեն, հոգիս, եկ յանձն առ, Ասուած սիրես: Պարոն Դիմաքսեան, խօսեցէք, համողեցէք...

Վերջապէս, նա մի քանի վայրկեան կանդ առաւ: Այն ժամանակ օրիորդը բացադրեց, թէ ինչու յանձն չէ առնում տեսչուհու պաշտօնը: Միթէ չը դիմուն, թէ ինչ նպատակով է նա գնացել արտասահման: Այժմ հասել է այդ նպատակը իրազործելու ժամա-

նակը, և նա պէտք է թողնի իւր վաղուց երևակայած և փայ-
փայած գործը: Բացի դրանից, նա ուզում է բոլորովին անկախ
գործել, ինքն իւր պարապմունքի համար պատասխանատու լինել
խղճի և հասարակութեան ուղղեա:

Դիմաքսեանը հաւանեց օրիորդի վերջին պատճառաբանութիւնը:
Խնչպէս ամեն բանում, այսուեղ էլ նրան դրաւց անհատի ազատ գոր-
ծունէութեան սկզբունքը: Նա դարձաւ տիկնոջը և ասաց, թէ համակ-
րելով օրիորդի նպատակին, դժբաղդարար, չէ կարող տիկնոջ առաջար-
կութիւնը պաշտպանել: Ամեն մարդ պէտք է ծառայի այն գործին,
որին աւելի է համակրում և տյնալէս ծառայէ, ինչպէս ինքն է ուզում:

Տիկնոջ դէմքի վրայ երևեց դժգոհութեան նշան: Նա մոքում
չարացաւ Դիմաքսեանի դէմ: Բանն այն էր, որ նա իւր ընկերու-
հիների մօտ պարծեցել էր, թէ մեծ ազդեցութիւն ունէ օրիորդ
Կարինեանի վրայ և թէ կարող է ինչ-որ կամենաց նրան անել տալ,
որովհետեւ շատ երախտիք ունէ նրա վրայ: Խսկ ճշմարտութիւնը
այն էր, որ մինչև օրիորդի արտասահման գնալը տիկինը գրեթէ
ոչինչ յարաբերութիւն չէր ունեցել նրա հետ: Այն ժամանակ նա
չէր էլ ուզում ազգականուհի համարել մի օրիորդի, որ իւր աշ-
խատանքով էր ասլրում:

— Ի հարկէ, — դարձաւ տիկինը օրիորդին, չը կարողանալով
զսպել ներքին մաղձը, — իմ խնդիրը քեզ համար ոչինչ, քանի որ
պարոն Դիմաքսեանը չէ բարեհաճում քեզ խորհուրդ տալ...

Այս խօսքերի մէջ կար մի յետին իմաստ: Դիմաքսեանը հաս-
կացաւ և մի անզուսպ ատելութիւն զգաց դէպի այդ ժամանակա-
կից Փանֆարոնուհին, որի իւրաքանչիւր խօսքից բուրում էր կեղ-
ծութիւն և մնափառութիւն: Մանաւանդ ատելի երևեց նրան տի-
կինը իւր հարուստ մետաքսեայ հագուստով, որ բնաւ չէր համա-
պատասխանում նրա արւեստական լրջութեանը:

— Խնդրեմ ծառային հրամայես մի կառք կանչել, — ասաց
տիկինը օրիորդին, ոոքի կանչնելով, — ես ժամանակ չունեմ երկար
խօսելու, մինչև կոկորդս գործերի մէջ թաղլած եմ: Ուրեմն մեր-
ժմում ես. շատ լաւ, մնաս բարով, չեմ մոռանալ:

Եւ արհամարհանքով ու դոռոզութեամբ ողջունելով Դիմաք-
սեանին և Մսերեանին, շոապով դուրս գնաց:

— Նատ լաւ արեցիք յանձն չ'առիք, — ասաց Դիմաքսեանը օրիորդին:

— Լաւ արեցի, բայց իմ մերժելը ինձ էժան չի նստիլ:

— Խնչապէս:

— Ընկե ըութեան կառավարչուհիները կ'աշխատեն իմ գործին վնասել:

— Միթէ նրանք այդ կանեն:

— Ով զիտէ:

— Իսկ մենք կը պաշտպանենք ձեր գեղեցիկ գործը, — ասաց Մաերեանը, որ ինքն էլ չը կիտէր, թէ ինչպէս պէտք է պաշտպանի: Նրա համար այժմ կարինեանը մի անգնահատելի դիւտ էր հայ կանանց շրջանում: Նա հիացած էր օրիորդի եռանդով և այն ոգևորութեամբ, որ նա աշխատում էր իրագործել իւր փայփայած ձեռնարկութիւնը:

Նրա միտքը մանկական պարտիզի վիճակով զբազւած էր ոչ պակաս քան օրիորդինը: Սրաի հաճոյքով նա երեակայում էր կարինեանին շրջապատւած հարիւրաւոր փոքրիկ արարածներով, որոնց մատաղ հոգոյ մէջ պէտք է ցանէր կրթութեան առաջին սերմերը: Որքան ազնիւ և նախանձելի էր այդ գործը նրա աչքում և ինչքան նա կը ցանկանար մի որ և է փոքրիկ դեր կատարել այլտեղ: Նա կը կատարի նոյն իսկ հասարակ վերակացուի պաշտօն, եթէ միայն օրիորդը թոյլ կը տայ:

Արդէն կարինեանը թոյլտութիւն ստացել էր պարոէզը բանալու: Սակայն սկզբնական ծախքերի համար փող էր հարկաւոր, և նա չունէր: Նա վճռել էր իւր հայրական տան առջև գտնւող այդին դրաւ դնել, բայց այդ բաւական չէր. նա մասնաւոր պարոքեր ունէր: Այս պատճառով օրիորդը յուսահատութեան մէջ էր: Դիմաքսեանը պատրաստ էր անմիջապէս առաջարկել իւր օգնութիւնը, բայց չէր վստահանում: Մի գուցէ դիպչէր նրա ինքնասիրութեանը, բայց չէր վստահանում: Մի գուցէ դիպչէր նրա ինքնասիրութեանը:

Մի անգամ նա իւր ցանկութիւնը յայտնեց Մաերեանին և խորհուրդ հարցրեց, արդեօք ինչ կերպ օրիորդին օգնի, որ վիրատորական չը լինի:

— Ես շատ համակրում եմ նրա ձեռնարկութեանը և շատ

կը ցաւէի, եթէ միայն փողի պակասութեան պատճառով նա գլուխ չը դար:

Խեղճ իդէալիստ: Նոյն բոպէին նա զգաց փողի քաղցրութիւնը և ոյժը այնպէս, որ երեք չէր զգացել: Ինչու նրա գրպանը լիքը չէ, որ նա ինքը իւր կողմից օգնէ օրիորդին: Առաջին անգամ նա իւր սրտում զգաց նախանձ դէպի Դիմաքսեանի հարստութիւնը: Նա մինչև անգամ վրդովեց:

— Զեմ կարծում, որ օրիորդ Կարինեանը ումից և է պարսպ վերցնի: Նա հպարտ է, նա կը վիրաւորէի, վերջապէս, նա ուրիշների օգնութեանը բնաւ կարօտ էլ չէ:

Եւ այս խօսքերը արտասանելիս իդէալիստի ձայնը դողաց, արտայատելով նրա յուզմունքը:

Դիմաքսեանի համար այդ տարօրինակ խոռվութիւնը գեռ անհասկանալի էր: Ուստի նա միամտաբար նկատեց.

— Դու այնպէս ես պաշտպանում օրիորդին, որ, կարծես, ես վիրաւորէցի նրան:

— Ես նրան յարգում եմ, հասկանմաւ ես, յարգում եմ...

— Միթէ ես չեմ յարգում:

— Բայց դու... դու ուրիշ կերպ...

Յանկարծ նա սթափւեց, ուշքի եկաւ, խօսքը ընդհատեց:

Խօսակցութիւնը տեղի ունէր Մսերեանի տանը: Նրանք ճաշից յստոյ նստած էին լուսամոտի առջև: Իդէալիստը անորոշ հայեացքով նայում էր հեռաւոր հորիզոնի վրաց կուտակւող սև ամպերին: Նրա խորշումած ճակատի վրաց ընկերը նշմարեց մի տեսակ մռայլութիւն: Դա այն մշտական թափսծութիւնը չէր, որ դրոշմուած էր նրա դէմքին շատ վաղուց և որ երբեմն միայն սքօզւում էր գւարժութեան բոպէներին:

Ի՞նչ էր կատարւում այդ միջոցին երեսուն ու եօթ տարեկան ամուրիի հոգում—դա չէր կարող առ այժմ հասկանալ Դիմաքսեանը:

Երբ Դիմաքսեանը տուն վերադարձաւ, միաքը շարունակ զրադւած էր կարինեանի ձեռնարկութիւնով: Օրիորդի մտազրազ կերպարանքը չէր հեռանում նրա աչքի առջևից: Իրաւ, ճիշդ էր ասում Մսերեանը, նա փոխւել է, շատ է փոխւել: Նա այժմ տպեղ

չէ երևում, մինչև անգամ սիրուն է զարձել: Նա խելօք է, եռանկուն է, աշխատասէր,—ահա յատկութիւններ, որ կարող են դրաւել մտածող տղամարդին:

Է՛հ, Տէրը նրա հետ, թող ինչ ուզում է լինի, ի՞նչ գործ ունէ նրա հետ: Նա կամենում էր օգնել, Մսերեանը ասաց անկարելի է, «Հպարա է, օգնութիւն չի լնդունիլու»: Բայց ինչո՞ւ էր Մսերեանը վրդովւած: Անշուշտ այդ մարդուն մի բան պատահել է և Դիմաքսեանը չը գիտէ:

Փոքր ինչ անցած նա մոռացաւ օրիորդին էլ, Մսերեանին էլ և նրան տիրեց պարբերապէս կրկնւող տիսրութիւնը:

Սարսափով, այժ, կատարեալ սարսափով նա ցիշեց, որ գարունը մօտենում է: Դարձեամլ նա պէտք է ենթարկվի թախծալի հոգեկան մենութեան տառապանքներին, դարձեամլ պէտք է զգայ սիրելու և սիրելու բուռն պահանջ, դարձեամլ կեանքը պէտք է ապարդին և ամայի թւայ նրան...

Այս մոտատանջութեան միջոցին նրա առջեւ կենդանի պատկերացաւ Գայլիանէն: Նրա կրծքից դուրս թռաւ մի ծանր հառաշանք: Ահա նա իւր հրապուրից կապուտակ աչքերով: Ինչո՞ւ նա փոխել է, մէր է նրա նախկին կենսական զւարժութիւնը, ինչո՞ւ նա այնքան նիհարել է, դալկացել և այնպէս մելամաղձու է երեսում նրաց հետ թեւ թեւի տւած զբօննելիս:

Միթէ նա դժբանղդ է:

XIV

Պեօար Սոլոմոնիչը մի զարմանալի հոգեկան այլափոխութեան էր ենթարկելու: Այդ գւարթ, բարեսիրտ, առոյդ մարդու ամբողջ բնաւորութիւնը կոտրել էր և երկու մասի բաժանել:

Այժմ նրա մէջ բնակւում էին երկու միմեանց բոլորովին հակառակ մարդիկ՝ ներքին և արտաքին, ընտանեկան և հասարակական: Տնային Պեօար Սոլոմոնիչը վերին աստիճանի դիւրազրգիռ էր, անհամբեր, ամենաչին բաների համար գոռացող, կռւարար, մինչեւ անգամ հայնոյոդ: Հասարակական Պեօար Սոլոմոնիչը համբերող էր, ամենքի հետ համաձայնւող, ոչ ոքի չը հակառակող, շփոթւող և այնքան հեզ, այնքան հեզ, որ ամենահեռաւոր ծանօթներին անգամ զարմացնում էր:

Նա ոչ միայն առաջւաց պէս տաք տաք չէր վիճում քաղաքացին գործերի մասին, այլ և չէր պաշտպանում ոչ քաղաքագլխին, ոչ Ամբակում Աֆանասիեւին և ոչ էլ ինքն իրան, եթէ մինչև անդամ երեսին հայհոյէին էլու Բայց, որ ամենազարմանալին էր, շատ անգամ նա քաղաքացին Խորհրդի նիստերն էլ բաց էր թողնում:

Օրւայ մեծ մասը նա տանն էր լինում, ծխում էր, մտածում, մանգալիս և ինքն իւր հետ խօսում: Նա շարունակում էր լրագիրներ կարդալ, բայց այժմ ուրիշ կերպով: Առաջ նա պարտաւորապէս սկսում էր Խորհրդին վերաբերող գրւածներից և առհասարակ քաղաքային լուրերից: Այժմ նա նախ և առաջ ուշադրութիւն էր դարձնում չորրորդ երեսի վրայ, ուր պատմեում էին զանազան տարօրինակ դէպքեր, խորհրդաւոր եղելութիւններ, բոմանտիքական ինտրիգներ, գաղտնի սպանութիւններ, և այլն և այլն:

Երեկոները, հակառակ նախկին սովորութեան, նա կլուր չէր գնում և ոչ էլ դուրս էր գալիս փողոց մշտական զրօսանքը կատարելու: Մի քանի անգամ կինը փորձեց իմանալ, արդեօք ինչու նա հասարակութիւնից երես է դարձրել: Բայց ծերունին այնպէս կատաղեց, այնպիսի վայրենի գոռոցներ արձակեց, որ ապշած տիկինը պապանձեց:

Առհասարակ տարօրինակ բաներ էր անում այդ մարդը: Դիցուք նա նստած է իւր սենեակում մենակ, մտածում է կամ ինչոր հաշիւներ անում: Յանկարծ նրա ականջին մի ձայն է հասնում: Նա արագութեամբ վեր է թռչում և անցնում միւս սենեակ, ուր գլուխում են նրա կինը, զաւակները և Ովսաննան:

— Այստեղ ով էր խօսում:

— Մենք:

— Ուրիշ մարդ չը կմը:

— Ուրիշ ոչ զը չը կար:

— Ես կարծեցի հիւր եկաւ:

Եւ ծերունին շփոթւած, ծանր քայլերով անցնում էր դարձեալ իւր սենեակը:

Մի անգամ նա դարձաւ կնոջը.

— Աննա, Ովսաննան այժմ մեծացել է, չէ:

— Առաջիկաց յունիսին տասնութ տարին կը լրանալ:

—Ուսումն էլ կը վերջացնի, չէ:

—Ի հարկէ:

—Եէ, չթս մտածում նրա մասին:

—Ի՞նչ պէտք է մտածել:

—Մարդու տալու համար:

—Նա ինքն իւր համար մարդ կը գտնի:

—Համ, ի՞նքը:

—Այս, ի՞նչ կայ, ինչնւ ես այդպէս զարմացած մտիկ անում աշքերիս:

—Ես կարծում էի, որ նրա համար էլ դու պէտք է փեսացու ճարես, հասկանմաւ ես, երիտասարդ, գեղեցիկ, կրթւած փեսացու:

Եւ «երիտասարդ, գեղեցիկ, կրթւած» բառերը առանձին շեշտելով, մի սուր հայեացք ձգեց կնոջ վրայ ոտից մինչև գլուխ և գնաց:

Մի ուրիշ անգամ:

—Աննա:

—Ի՞նչ կայ:

—Լիզոչկան և Նլեչկան էլ մեծանում են:

—Տեսնում եմ:

—Շուտով դու էլ հարսնացու աղջիկների մայր կը լինես:

—Այդ մասին դեռ ժամանակ չէ մոտածելու, վաղ է:

—Ժամանակ չէ, —գուաց Պեօտր Սոլոմոնիչը, ոտը ուժգին զարկելով յատակին, —Ժամանակ է, տես, նրանց հայրը ինչպէս պառաւել է:

Կինը սիրալիր ժպտաց, նրա ասածը կատակի տեղը նդունելով:

—Ծիծաղում ես, համ, ի հարկէ, կը ծիծաղես: Ես պառաւեմ, ուզում են իմ աղջիկներիս շուտով մարդու տալ, թուներ եմ ուզում տեսնել և յետոց մեռնել:

—Ի՞նչ մեռնելու ժամանակ ես գտել, Պետեա, դու դեռ այնքան...

—Ես դեռ այնքան ի՞նչ, ասա ի՞նչ...

—Առողջ ես:

—Բայց պառաւ եմ, չէ, պառաւ, քաւթառ, կուչ եկած, սպիտակ մազերով, կեղծ ատամներով...

Եւ նա դարձեալ մի տարօրինակ հայեացք ձգելով կնոջ վրայ, քնթի տակ ինչ-որ մըմըթաց և հեռացաւ:

Կինը ապշած շարժում էր ուսերը, նայելով նրա ետևից: Խոկապէս նա գիտէր ամուսնու: տրամադրութեան բռն պատճառը: Բայց չէր հասկանում, ինչու ծերունին առաջ այդպէս չէր, յանմարծ փոխւեց, այժմ, երբ տիկինը իրան համարում էր աւելի պակաս մեղաւոր: Նրան սարսափեցնում էին այդ կիսավայրենի հայեցքները, այդ սոսկալի լոռութիւնը, այդ հիւանդոս կասկածամութիւնը, վերջապէս, այդ անստեղի գոռոցները:

Այժմ տիկինը ապրում էր գրեթէ հեռու հասարակութիւնից: Պեօտր Սոլոմոնիչը հիւրեր չէր ընդունում, խոյս տարով նոյն իսկ ազգականներից: Նա սաստիկ կատաղում էր, երբ կինը զուգում էր մի տեղ գնալու, ուր որ լինէր, թէկուզ մի հիւանդ ազգականունու մօտ, թէկուզ խանութից մի բան գնելու: Խսկ երբ դուրս գալը անհրաժեշտ էր, նա Ովսաննային խնդրում էր ուղեկցել տիկինոջը, որ «մենակ տիսուր չը լինի»: Խսկ ինքը երբէք նրա հետ դուրս չէր գալիս:

Այդ անտանելի կացութիւնը, հարկաւ, չէր կարող չազդել երիտասարդ տիկինոջ վրայ: Եւ նա տեսնում էր, որ օրից օր կորցնում է իւր զւարժութիւնը: Խոնչ սարսափ զգաց նա, երբ առաջին անգամ հայելու մէջ նկատեց իւր գլխի մազերի մէջ սպիտակիներ: Միթէ նա արդէն երեսուն ու չորս տարեկմն է: Բայց մմրդը, մմրդը, ծօ, նա վաղուց վաթսունից անցել է: Դժբաղդ կեանք, անիծեալ կեանք: Նա կատաղութիւնից բռունցքները սեղմեց, շրմունքները այնպէս կծեց, որ արին դուրս եկաւ:

Մօտեցաւ ամառը: Տիկինը կարծում էր, որ գոնէ ամարանոցում նրա կեանքի սպայմանները աւելի կը թեթևանան: Բայց որքան յուսախափ եղաւ, երբ Պեօտր Սոլոմոնիչը դրականապէս յացոնեց, թէ վճռել է ամառը ապրել... Մարդկուպում...

Մարդկուպ, Խութերա, տիկին Բախտամեանը զնաց Խութերմ: Ոչ, այդ անկարելի է, անհաւատալի է, այդ չափազանցութիւն է, խայտառակութիւն է: Ոչ մի հարուստ, ոչ մի քիչ թէ շատ յայտնի ընտանիք չէ զնում այդ յետ ընկած ամարանոցը:

Նա հակառակեց, նա լաց եղաւ: Բայց ոչինչ չօգնեց: Պեօտր Սոլոմոնիչը վճռել էր և պէտք է իւր վճռը կատարեր:

Այն ժամանակ տիկինը փորձեց մի անգամ էր գործ գնել

սպառնալիք։ Նա ասաց, թէ այդ տեսակ կեանք կրել չէ կարող, թէ կը թողնի մարդուն էլ, երեխաներին էլ և կը շաժանւի։

Մի զառն հեգնական ժամփառ մարդու կողմից եղաւ կնոջ պատասխանը։ Պեօտր Սոլոմոնի՛ը դռները լայն բաց արեց, կանգնեց և, ձեռը մեկնելով դէպի դուրս, ասաց.

«Համեցէք»:

Ոչ մի տեղ նա չէ կարող գնալ։ Նա Պեօտր Սոլոմոնի՛ Բախտամովի օրինաւոր կինն է, աէտք է հնազանդւի նրա կալքին։ Խակ եթէ յանդգնի անից ոտը դուրս գնել, ոստիկանութեան միջոցով, օրէնքի և եկեղեցու անունով յետ բերել կը տայ։ Ո՞վ պէտք է նրան պաշտպանի։ Պառաւ մայրը։— Նա քաղծից մեռնում է։ Եղբամյրը։— Զունէ եղբայր։ Ազգականները։— Զեն համարձակւիր։

Վերջապէս, տիկինը խնդրեց խնայել գոնէ Ովսաննային։ Հարսնացու աղջիկ է, բնչ մեղք ունէ, որ նրան գատապարտում են երեք ամիս ապրել մի խուլ անկիւնում, ուր, բացի կոպիտ գիւղացիներից, ոչ ոք չը կայ։

Սակայն Պեօտր Սոլոմոնի՛ը պատասխանեց, թէ Ովսաննան, եթէ ուզում է, կարող է քրոջ հետ ամարանոց գնալ։ Բարաթեանները կամ Բորժում կը գնան կամ Սբասթուման կամ մի ուրիշ աւելի լաւ տեղ։

— Նրանք ջահիլ են, նրանց ուրախ կեանք, ուրախ տեղ է հարկաւոր։ Մենք պառաւ մարդիկ ենք, որտեղ էլ որ լինի միւնոյնն է մեզ համար, միայն թէ օդը մաքուր լինի։

Ոչինչ չէր կարելի անել։ Տիկինը ակամաց հնազանդւեց։ Բայց Ովսաննային չը թողեց Գայիսնէի հետ ամարանոց գնալ։ Խնչմա, թող այդ աղջիկն էլ տիրի նրա հետ մի աննշան գիւղում։ «Փոնէ նա կարող է միիթարել ինձ», ասում էր տիկինը։

Պեօտր Սոլոմոնի՛ը շարախնդութեամբ ժպառում էր, տեսնելով կնոջ յուսահատութիւնը։ Պարզ էր, որ նրան մի սատանայական հաճոյք էր պատճառում այդ բոլորը։

Անվերջ, ձանձրալի և տիսուր էին տիկնոջ համար այդ երեք ամիսները։ Նրան թւում էր, թէ աքսորականի կեանք է վարում։ Ուրախութեամբ նա կը համաձայնէր մնալ քաղաքում, խաշուել թէկուղ ամիրիկեան մետանելի շոքերի մէջ, միայն թէ «մարդկանց»

երես տեսնէր, մարդկանց և ոչ մի քանի հաւլաբարցիների, ոչ հաւառ ձու ծախող շինականներին:

Հետզհետէ նա էլ Պետոր Սոլոմոնիչի պէս դառնում էր դիւրագրգիռ, կուտարար: Իւր սրտի թոյնը նա թափում էր շրջապատողների գլխին: Նա երբեմն մինչև անգամ ձեւք էր բարձրացնում իւր անմեղ զաւակների վրայ՝ նրանց մի չնչին զանցառութեան համոր:

Աշնան սկզբին քաղաք վերադառնալով, նրան թւաց, թէ դժոխքից արքայութիւն տեղափոխեց: Նա ագահութեամբ վազեց փողոց, պըտոտեց խանութները, ացցելեց բոլոր ընկերուհիներին: Պետոր Սոլոմոնիչը մոքում վճռել էր նրան մի շաբաթ ազատ թողնել. միայն մի շաբաթ, իսկ յետոյ դարձեալ պէտք է նրան իւր ճանկերի մէջ առնէր:

Երբ Աննային հարցնում էին, ինչ զարմանալի միտք ստիպեց նրան Մարդկոպը գերադասել գեղեցիկ ամարանոցներից, նա ամաչելով պատուսանում էր.

— Զանձրացել էի հասարակութիւնից:

— Օ՛հ, էլ մի՛ ասէք, մենք Վիսրադէնում զզւեցինք...

— Սիրտս էր տրաքում Վիէննայում:

— Այս ամառ Փարիզում շատ շք էր:

Այս բոլորը դիտմամբ արձակւած փշեր էին լսեղճ տիկնոջ սիրտը խոցոտելու համար:

Որքան Պետոր Սոլոմոնիչը սառած լինէր դէպի հասարակական գործերը, չը կարողացաւ անտարբեր մնալ քաղաքային նոր ընտրութիւնների ժամանակ: Յայտնւեց, թէ այս անգամ ընտրողական պայքարը աւելի սաստիկ պէտք է լինի, կուսակցութիւնները աւելի թշնամաբար են տրամադրւած:

Ամբակում Աֆանասիեվիչը անչափ վրդովւած էր:

«Այդ կռօնները, կռօնները, բացականչում էր նա, ամեն տեղ ասում են, թէ մենք քաղքցիներս ոչ մի բանի ընդունակ չենք, բացի Կախեթի գինի խմելուց ու շարմանկա լսելուց: Զհուդներ, հաց խլողներ:

Այսուեղ Պետոր Սոլոմոնիչի թմրած աչքերը մի վայրկեան վառեցին: Նա սրտմտութեամբ գոչեց:

—Մերոնք կռօ-ջնուղներից վատ են; Եթէ նրանք մեր հայն են խլում, մերոնք էլ մեր տան պատիւն են ոռքի տակ տալիս:

Ասաց նա այս խօսքերը, որովհետեւ չը կարողացաւ զսպել սրտի մաղձը: Սակայն նոյն պահին զգաց իւր անզգուշութիւնը, լռեց իսկոյն և, երեսը շուռ տալով, հեռացաւ, առանց մինչև անգամ ցը տեսութիւն ասելու:

Ամբակում Աժմանասիւլիչը չափից դուրս զարմացած նայեց նրա ետևից և աչքերը լայն բաց անելով արտասանեց.

«Եհէ, խեղճ մարդ, բանդ բուրդ է....»:

XXV

Օրիորդ կարինեանը արտասահմանից վերադառնալուց յետոց ընդհանուր ուշադրութիւն էր գրաւելի նրա անխառն, անշեղ բնաւորութիւնը, անկեղծ և հասարակ վարմունքը հաւաքել էին նրա շուրջը մի խումբ օրիորդներ և երիտասարդներ: Շաբաթը երկու անգամ նրա բնակարանը լիքն էր լինում հիւրերով:

Այցելում էին յաճախ և՛ Մսերեանը, բժիշկ Սալամբէկեանը և Դիմաքսեանը: Տանտիբուհու պարզ վարմունքը ամենքին արամագրում էր լինել ազատ, զւարթ: Այդաեղ չը կար կեղծ վերաբերութիւն դէպի միմեանց, աշխարհացին փոխադարձ շողոքորթութիւն կամ գոռողութիւն: Ամենքը պահում էին իրանց համեստ, վայելուչ, բարեբարոյ և, միևնոցն ժամանակ, գիտէին յարգել միմեանց արժանաւորութիւնը:

Հիւրերը սովորաբար հաւաքւում էին հինգշաբթի և շաբաթերեկոները, երբ օրիորդը ազատ էր իւր զբաղմունքներից: Մսերեանի ոգեսրիչ զբոցցները և Դիմաքսեանի սուր, առողջ զատողութիւնները լնկերական շրջանին տալիս էին լրջութիւն: Կատակը, զւարճութիւնը երբէք չափաւորութեան սահմանից չէին անցնում:

Սակայն երեկոյթների կենարոնը բժիշկ Սալամբէկեանն էր: Նրա սառն, դանդաղ եղանակով արտասանած կատակները, կիսահիասթափ և յոռետես սրախօսութիւնները կամայ ակամայ շարժում էին ամենքի ծիծաղը: Նա ինքը երբէք չէր ծիծաղում, նոյն իսկ ամենազւարձալի մի բան պատմելիս նրա մելամաղձու դէմքի վրայ ժպիտ չէր երեսում: Դա աւելի համեմում էր նրա հումորը,

որ անիմաստ և դատարկ բաների մասին չէր, այլ միշտ հարւածում էր կեանքի որ և է վաս երևոյթ:

Այնու ամենայնիւ, վերջին ժամանակ նրա մէջ էլ նկատելի էր մի տեսակ փօփօխութիւն: Նա դարձել էր համեմատարար աւելի զործունեաց և եռանդուն: Նա առաջւաց չափ յաճախ չէր կրկնում ևաշխարհը դատարկ բան էր: Բացի հիւանդանոցում ունեցած պաշտօնից, նա ձեռք էր բերել և ուրիշ մի թեթև բժշկական պաշտօն, ունէր նաև «պրակտիկա»: Առհասարակ մելամազնութեան հետ այժմ նրա աչքերի մէջ երեսում էր և՛ մի տեսակ զւարթութիւն: Կարծես, կեանքը նրա համար աւելի հրապուրի: Էր դարձել:

Ժողովների ժամանակ Մսերեանը դիտում էր բժշկին, մանաւանդ այն բոպէներին, երբ նա կարինեանի հետ էր խօսում: Այդ միջոցին իրէալիստը նկատում էր, որ բժիշկը աւելի զւարթանում է և աւելի աշխոյժ ստանում: Եւ նա զգում էր մի ակամաց նախանձ: Թախիծը սրտում նա հետևում էր օրիորդի իւրաքանչիւր քայլին, աշխատում էր գոնիել յարմար ժամանակ նրա հետ առանձին խօսակցելու: Բայց երբ յարմար ժամանակը գալիս էր, նա շփոթւում էր, յուզում և չէր կարողանում ինչի մասին խօսել և ինչպէս սկսել:

Ամբողջ կեանքի ընթացքում նա այդ տեսակ շփոթութիւն առաջին անգամն էր զգում: Ուստի երեսնութ տարեկան ողամարդը այս դէպքում նմանում էր մի անփորձ պատանիի:

Բայց ինչքան ձանձրացնում էր Մսերեանին այրի Քոլումբաշեանը: Այդ հասակաւոր կինը երիտասարդների շրջանում իրան պահում էր աւելի քան երիտասարդ: Նա, կարծես, երդւել էր ամուրի Մսերեանին հալածել մինչև վերջին շունչ, այնքան, մինչ որ գուցէ նա յաղթւի:

Ամառւայ սկզբին ընկերական շրջանը ցրւեց: Ամենքը գնացին այս ու այն կողմ: Օրիորդ Կարինեանը հրաւիրւեց ամարանոց իւր մի ազգական ընտանիքի հետ ամառը անցկացնելու:

Դիմաքսեանի ջղերը բոլորովին յոգնել էին, նա զգում էր հանգստանալու կարիք: Նա վշտացած էր մի անաջողութեամբ: Նա աւարտել էր իւր գրւածքը ևանհատի և հասարակութեան մասին:

բայց մի անյաղթելի խոչնդուսի պատճառով ստիպւած էր նրան լոյս չընծայել:

Նա առաջարկեց Մսերեանին միասին գնալ մի տեղ օդափոխութեան: Եւ նրանք ուղևորւեցին այն ամարանոց, ուր հրաւիրւած էր Կարինեանը:

Այդուեղ էր նաև Գայիանէն իւր զաւակների հետ:

Երկու ընկերները վարձեցին մի հիւրանոցում՝ երկու սենեակ, վճռելով մնալ մի ամբողջ ամիս, որից յետոյ Դիմաքսեանը մտադիր էր գնալ իւր ծննդավայրը:

Ամեն օր նրանք առաւտօնեան դուրս էին գալիս լեռնային մաքուր օդ շնչելու և բնութեան հրաշալի տեսարաններով զւարճանալու:

Մի անդամ Դիմաքսեանը հանդիպեց Գայիանէին: Տիկինը իւր երկու փոքրիկ զաւակների և զայեալի հետ հասարակական ծառաստանումն էր: Դիմաքսեանի հետ էին Մսերեանը և օրիորդ Կարինեանը: Նա կամեցաւ բարեել տիկնոջը և անցնել: Բայց օրիորդը մօտեցաւ Գայիանէին, համբուրեց նրա երեխաներին և ղեկիցները ստիպւած եղան կանգ առնել:

Գայիանէն հագած էր հասարակ շժեայ ամարային զգեստ, որի մուգ կապոյտ գոյնը աւելի ակնյաց էր կացուցանում նրա դէմքի գունասութիւնը:

Խումբը նստեց մի փայտեայ նստարանի վրայ: Գայեակը երեխաների հետ խաղում էր մի քանի քայլ հեռու, կանանչ խոտի մէջ: Մեծ երեխան արդէն վազվում էր, փոքրը հաղիւ կարողանում էր իւր թոյլ ոտիկների վրայ կանգ առնել:

Գայիանէն պատմեց օրիորդին, որ նրա ամուսինը բնակւում է քաղաքում և միայն շաբաթը կամ երկու շաբաթը մի անդամ գալիս է ամարանոց մի քանի օրով: Օրիորդի և տիկնոջ յարաքերութիւնը բաւական բարեկամական էր: Բայց հեռաւոր ազգականուհիներ լինելուց, նրանք գիմնազիական ընկերուհիներ էին եղել:

Դիմաքսեանը Գայիանէի խօսքերից բնազդումով զգաց, որ տիկինը աշխատում է ցոյց տալ, թէ իւր կեանքը անցնում է շատ ուրախ, երջանիկ: Բայց նա կեղծիքը հասկանում էր և չէր կարող չը հասկանալ: Նա ծանօթ էր իւր նախկին ընկերոջ բնաւորու-

թեանը, գիտէր, թէ այժմ նա ինչ տեսակ կեանք է վարում տնից դուրս Ուստի երեւակացում էր, թէ որքան կարող է երջանիկ լինել մի կնօշ կեանք, որ այդպիսի աշնուին ունէ, եթէ միայն այդ կինը կամ չափազանց յիմար կամ չափազանց դիւրահաւան չէ: Իսկ թէ Գայիանէն ոչ այս էր, ոչ այն, որ նա խելօք էր, զգայուն, որ նրան գոնէ այժմ խարելը դժւար էր—այդ շատ լաւ գիտէր Դիմաքսեանը:

Նա սկսեց խղճալ տիկնոջը, բայց, միւնոյն ժամանակ, վրդովեց էլ: Թող նա կրէ իւր անզգուշութեան և կուրութեան պատիժը: Թող տեսնի, թէ ուշ հետ կապեց իւր կեանքը յաւիտեան, գերազանելով արտաքին փայլը և շուքը ներքին, հոգեկան արժանաւորութիւններից:

Այնուհետեւ Դիմաքսեանը յաճախ պատահում էր Գայիանէին, որ միշտ իւր փոքրիկների և նրանց դայեակի հետ էր լինում և միշտ միւնոյն նստարանի վրայ նստած: Երբ Դիմաքսեանը մենակ էր լինում, ամաչում էր մօտենալ նրան, թէև տիկինը ընդունում էր նրա բարեները այնքան սիրալիր, այնքան բարեկամական կերպով, որ կարող էր վստահ մօտենալ, առանց կասկածելու, թէ այդ դուր չի գալ նրան:

Հետզհետէ նրա սրտում պակասում էր նախկին ատելութիւնը, տեղի տալով ցաւակցութեանը: Նա ցաւում էր Գայիանէի մասին, որովհետեւ համոզում էր, որ նա դժբաղդ է:

Երբեմն նա Մսերեանի հետ հիւրանոցի պատշգամբի վրայ նստած մինչև ուշ գիշեր խօսակցում էր: Եւ նրանց խօսակցութեան առարկան մեծ մասամբ Գայիանէն և օրիորդ Կարինեանն էին:

Իդէալիստի համար այժմ չը կար ուրիշ աւելի հետաքրքրական թեմա, քան օրիորդը: Այժմ նա անշափ ուրախ էր, որ Կարինեանը, առանց ուրիշի օգնութեան, իւր գործը նիւթականի կողմից յաջողեցրել էր և սեղաների սկզբին արդէն պէտք է բաց անէր մանկական պարտէզը:

Մի օր յանկարծ ամարանոցում երևեց բժիշկ Սալամբէկեանը: Նա ասաց, թէ եկել է մի շաբաթով իւր ազգական մի ընտանիքի մօտ, որ Ալսալցխալից էր տեղափոխել ամարանոց:

Նրա գալը, ինչպէս երեսում էր, Մսերեանին դուր չ'եկաւ: Դիմաքսեանը նկատում էր, որ այդ օրերը իդէալիստը շատ տխուր

է, թէև ոչինչ չէ ասում և առհասսրակ շատ դադանապահ է դարձել:

Որքան այս հանգամանքը հետաքրքրական լինէր Դիմաքսեանի համար, բայց սեպհական մտատանջութիւնը ամեն բան մտացնել էր տալիս նրան: Նրա մոքից և աչքից չէր հեռանում Գալիհանէն: Ահա նա, միշտ մելամաղձոտ, միշտ գունատ, միշտ նստած միւնոյն նստարանի վրայ, մայրական զգոյց աչքերով հսկում է իւր փոքրիկներին: Նրը նա տեսնում է Դիմաքսեանին, բռնի գւարթութեան ժպիտը երեւան է գալիս նրա դէմքի վրայ: Նրա կապուտակ աչքերը դարձեալ փայլում են: Կեղծիր, կեղծիր, բայց քո դժբաղդութիւնը նկարւած է այդ մուալլուն աչքերիդ մէջ:

Մի անդամ՝ Դիմաքսեանը տիկնոջը հանդիսեց ամուսնու հետ: Նրանք զբօսնում էին հասարակական պարտիզում, ուր նւազում էր երաժշտութիւնը և անցուդարձ էին անում ամարանոցի անհոգ բնակիչները:

Աերջին ժամանակ Բարաթեանը դրեթէ անձանաչելի էր դարձել արտաքուստ: Մի ժամանակւայ նրբակազմ գեղեցիկ երիտասարդը զիրացել էր, փոր զցել: Նրա այտերը ուռել էին, կարմրել, պարանոցը հաստացել էր: Դէմքի նախկին նրբութիւնը և խելացի արտայացութիւնը տեղի էր տեւել բուրժուական կուշտ, անհոգ արտայացութեանը:

Գալիհանէի համար այդ փոփոխութիւնն էլ անախորժ էր: Երբեմն, դիտելով ամուսնուն, նա յիշում էր, որ մի ժամանակ այդ մարդու գրաւիչ յատկութիւններից մէկը նրա համար եղել է և գեղեցկութիւնը: Մէկը. գուցէ հէնց այդ մէկն էր զլխաւորը: Այժմ այդ էլ դաւաճանում է նրան: Ուրեմն ի՞նչն է նրա մէջ յարատե, մշտական:

Այժմ նրանց մէջ այլ ևս տեղի չէին ունենում ընտանեկան բուռն տեսարաններ: Գալիհանէն տանջւում էր լուռ, անբողոք: Բայց այդ լուռութիւնը որքան թանգ էր նստում նրա սրտին: Նատ անգամ կարելի էր տեսնել նրան իւր սենեակում առանձնացած արտասելիս: Ձէ որ այժմ նա միայնակ է, գրեթէ բոլորովին միայնակ, որբ, անպաշտպան: Ինչու տիկին Բախտամեանը չը թողեց Ովսաննալին, նրա հարազատ քրոջը, գալ նրա մօտ:

Ախ, այդ կինը. ամեն տեղ նա է Գայիանէի բազդի խոչընդուռը: Այս, նա առաջինը ստուեր ձգեց նրա ընտանեկան երջանկութեան վրայ, առաջինը կորցեց նրա բաղդը:

«Այսպէս է արդեօք, իզուր չէ իմ մեղադրանքը»:

Ոչ, ոչ, հազար անգամ ոչ Փաստեր: —Միթէ Խսակը անփորձ պատահի է, որ չը հասկանայ, թէ որքան ծանր է յանցանքը, այնքան պէսք է զգոյշ լինել «փաստեր» ջնջելում:

«Ձե որ հարիւր անգամ բռնել եմ նրա սուտը...»:

Եւ այդ բոլորից յետոյ, մի օր, մի դժբաղդ օր... ահա և փաստը...

Երեկոյ էր: Նրանք նստած էին ամարային կացարանի ընդարձակ պատշգամբի վրայ: Դայեակը երեխաներին քնեցրել էր և ինքը տնից հեռացել: Բացակայ էին և' միւս ծառաները: Մարդ ու էին առանձին էին:

Հասարակական պարտիզից լսւում էր երաժշտութեան ձայնը: Զով եղանակ էր, թեթև անտառային զեփիւռը մեղմիկ սոսափում էր ծառերի ճիւղերը: Գայիանէն, արմունկը յենած պատշգամբի վանդակապատին, դիտում էր օգոստոսի պարզ երկնակամարը, ուր պսպղում էին պայծառ աստղերը:

Վաղուց նրա թէկը սառել էր, բայց նա ձեռ չէր տալիս բաժակին:

—Վերջապէս, սկզբ է խօսես, թէ չէ, —արտասանեց Բարթեանը, —դու կարող ես մարդ խելագարեցնել:

—Ուզմում էք, որ խօսեմ:

—Ոչ միայն ուզում եմ, այլ դա մի բնական պահանջ է: Ամբողջ շաբաթը անտանելի շոքերում շան նման շարչարում եմ, գալիս եմ այսուեղ մի քիչ հանգստանալու և բնչ եմ տեսնում: Մի տիսուր, թթւած կերպարանք: Մինչև երբ, ասա, մինչև երբ պէտք է այդպէս շարունակի:

—Այն, մինչև երբ, —կրկնեց Գայիանէն հանդարտ, կարծես, ինքն իւր հետ խօսելով:

—Ուրեմն դու դեռ մտադիր ես երկան շարունակել: Ո՞չ, ի սէր Աստուծոյ, բաւական է, մի՛ տանջիլ ոչ քեզ, ոչ էլ ինձ:

—Եթէ իմ ձեռքիս լինէր այդ տանջանքից ձեղ ազատելը,

Աստծուն է յացնի, կազատէի: Բայց... չեմ կարող, ոչ, չեմ կարող, այն անմեղները...

Զայնը դողալով, մատնեց նրան: Սակայն նա կարողացաւ զսպել իրան: Մի քանի վայրկեան լսելուց յետոյ, նա ուղիղ նայեց ամուսնու երեխին և, թեթև հառաջելով, ասաց.

—Ես ձեզ համար մի սիւրպրիզ ունեմ:

Բարաթեանը աշքերը լայն բաց արեց:

—Ի՞նչ բան է այդ, —հարցրեց նա վախեցած:

Գայիհանէն հանդարտ վերկացաւ տեղից, անցաւ իւր սենեակը: Մի բովէ չ'անցած նա դուրս եկաւ՝ մի փոքրիկ ծրար ձեռին:

—Ճակատագիրը ինքն է երբեմն մարդկանց մեծ զգուշութիւնով թագրած կեղուը պարզում, —ասաց նա, —բայց եթէ այդ կինը այնքան խելօք լինէր, որքան դուք, այս բանը այսուեղ չէր ուղարկիլ: Գիտեմ, վաս բան է արածս, հասցէն ձերն էր, իրաւունք չունէի բաց անելու, բայց ի՞նչ արած, փաստ էիք պահանջում, ահա...

Բարաթեանը նստած էր ներսից լուսաւորւած պատուհանի առջեւ, ուստի նկատելի էր, թէ ինչպէս մի ակնթարթում փոխւեց նրա դէմքը:

—Խեղճ կին, նա տանջւում է: Միթէ դուք չէք կարող ոչնչով օգնել նրան, ազատել մի խելագար ծերունու ձեռքից, ինչպէս նա անւանում է այն ազնիւ մարդուն:

Երբէք Գայիհանէն այնչափ հանգիստ և, միևնոյն ժամանակ, այնչափ սարսափելի չէր եղել իւր մարդու համար, որչափ այդ բոպէին: Ինչպէս բարովականութեան մի անողոք դատաւոր, նա կանգնած էր մեղապարտ ամուսնու առջև և տալիս էր նրան իւր դատավճիւր:

Բարաթեանը միայն նայեց ծրարին, ամեն բան հասկացաւ, դրեց գրպանը: Հերքել անկարելի էր, հարկաւոր էր միայն պաշտպանելի: Նա հազիւ կարողացաւ ուշքի գալ, հսարել արդարանալու մի միջոց, մի խօսք: Սակայն Գայիհանէն չը թողեց նրան բերան բաց անել: Դրական և անդիմադրելի եղանակով նա ասաց.

—Ո՛չ մի խօսք...

Յետոյ, մի ծանր հառաջանք արձակելով տառապող սրտի խորքից, աւելացրեց:

—Մեր մէջ այսուհետեւ ամեն կատ պէտք է կորւած համարէլ:

Նա գլուխը բարձր պահած, գտնաստ, ինչպէս դիմակ, զգւանքով և ատելութեամբ լի մի հայեացք ձգեց ամուսնու վրայ և ծանր քայլերով անցաւ իւր սենեակը:

Բարաթեանը ժամանակ չ'ունեցաւ մի բառ անգամ արտասանելու: Բայց երբ Գայիանէն անհետացաւ, նա ձեռները յենեց ծընկներին, նայեց յատակին և, գլուխը շարժելով, արտասանեց.

«Կոմեդիան դրամա է դառնում...»

XVI

Ամարանոցը գտնուում էր կովկասեան երկրի մի գեղեցիկ վայրում: Դա գքանչելի նորժոմն էր, շրջապատւած բարձր, անտառազարդ լեռներով և ուղղահայեաց, անմատչելի ժայռերով:

Այստեղ մի կողմից հանդարտ հոսում է Քուրը: Միւս կողմից սրնթաց վազում է մի փոքրիկ լեռնային գետակ, որ կրում է ամարանոցի անունը: Գետը կլանում էր գետակին հովիտի կենտրոնում և գոյացնում երեք թերակղզիներ, որոնց վրայ սիռւած են հարուստ ու շքեղ աշարային կացարանները:

Արեգակը միան միջօրէին մի քիչ ժամանակ նայում է հովիտի խորքը, այնուհետև ահուելի ժայռերը ամեն ինչ քօղաւորում են իրանց մութ առերճներով: Գետակը լեռների ծոցից ջըշում բերում է մի անընդհատ զով: Եւ այդ զովն է, որ հալածում է ձորի մէջ տիրող բնական տօթը: Շարժուում են հսկայական եղեինների և մայր ծառերի գագաթները, խաղում են բազմատեսակ թփերի տերեկները և օդը լեցնում բնութեան մշտական համերգով:

Գետակը յուսահատ կռւում է ժայռերից թաւալած վիթխարի բեկորների հետ, և նրա յատակից լուռում էին տարօրինակ մոնչիւններ, նման մարդկային յուսահատ գուռոցների:

Տեղ տեղ այդ բեկորները գոյացնում են փոքրիկ ջրվէժներ, որոնք իրանց փրփուրներով հեռուից նմանուում են գետակի վրայ սիռած սպիտակ սաւանների: Իսկ տեղ տեղ նրանք գոյացնում են մանր կղզիներ, ուր առաւօտից մինչև երեկոյ թռչոտում են տեսակ տեսակ թռչուններ: Թանձր մացառներով ծածկւած քարքարոս ափերից տարածւում են աջ ու ձախ բազմաթիւ ուղիներ, որոնք տանուում են դէպի անտառապատ լեռների բարձրու-

թիւնը Ցեսարանը աւելի ամփոփ և աւելի գեղեցիկ է երեսում այդ լեռներից մէկի զազաթից դիտելիս։ Այստեղից բացւում է անթիւ ձորերի, կիրճերի և այլերի մի շարք։ Երեսում են ուրիշ գետակներ և առուակներ, որոնց մակերեւոյթները մերթ ժպտում են արեւի ճառագայթներից, մերթ մթնանում ծառերի և ժայռերի ստեղներից։ Նուրբ լսողութիւնը այսահեղ կարող է զւարձանալ մի տարօրինակ և վերին աստիճանի դուրեկան երաժշտութիւնով, որ բաղկանում է ստորոտում հոսող ջրերի ձայներից, թռչունների հէկոցներից և մեղմիկ հողմի շշնչիւններից։ Եւ այդ երաժշտութիւնը աւելի գերբնական է հնչում, աւելի ֆանտասիքական թւում։ Երբ լսողի հայեացքը թափառում է հեռաւոր լեռների զազաթներով, ուր դարաւոր ծառերը, կարծես, պարզ և կապուտ երկնքի հորիզոնում զի թական սիլուետների պէս պար են բռնում։ Միջօրէին մօտ արեւի ջերմութիւնը անտառի ծառերի, թփերի և ծաղիկների միջից դուրս է մղում պէս բուրմունքներ և նրանց անուշ խաւնուրդով տողորում լեռնային յատակ օդը։ Այդ միջոցին օդը փոքր ինչ փոխում է իւր գոյնը։ Երեսում է նրա մէջ մի նուրբ արձաթաղոյն փոշի, որ թեթև գոլորշի պէս բարձրանում է դէպի վեր և երկնքի մուգ կապտութիւնը սքօղում մի բարակ, թափանցիկ շղարշով։

Խնքը ամարանոցը երեսում է լեռների մէջ ամփոփւած և ծառերի խտութեան մէջ թաղւած։ Բանաստեղծական անկարգութեամբ տեղաւորւած տների և տնակների կանանչ, կարմիր մոխրագոյն և սպիտակ կտուրները հազիւ հազ նշմարւում են, ինչպէս դալար խոտի մէջ հանգող կրէաներ միայն գոյնզդոյն կեղեներով։

Դիմաքսեանը երբեմն մենակ նստում էր մի մահապատ ասպառածի վրաց ու ժամերով դիտում շրջակացքը։ Այդ միջոցներին նրա թափիծը չէր նմանւում սովորականին։ Նրա սիրաը լցւում էր զօրաւոր զգացումներով ու տարօրինակ ձգտումներով։ Նա նախանձում էր բնութեանը, այն, նախանձում էր նրա գեղեցկութեանը, նրա յարատև զոյութեանը, նրա անսահման ոյժին և օրէնքներին։ Հեռաւոր լեռների վաեմ տեսքը, սրածայր ժայռերի սոսկալի կերպարանքը, լնթացող ջրի մշտականութիւնը, այդ բոլորը նրա սիրաը ճնշում էին և, միևնոյն ժամանակ, բորբոքում։ Արիւնը

եռում էր երակների մէջ, և նա վրդովւսում էր, թէ ինչու բնութեան ստեղծագործութեան մէջ բանական արարածը, մարդը, չը պիտի յարատե վայելի այդ բոլոր սքանչելիքները։ Խնչն այդ գետակը, այդ անտառը, վերջապէս, այդ անօգուտ ժայռի բեկորը աւելի պէտք է շարունակէ իւր գոյութիւնը, քան թէ ինքը։ Խնչն մարդ այնքան փոքրիկ է, այնքան աննշան, որ մի մատաղ ծառ, մի որ և է թուփի կարող է ծածկել նրան բնութեան, այդ վիթխարի ոչժի, առջև։

Երեսուն և մէկ տարեկան է, դարձեալ մի տասը տարի, և ահա նա ոտք կը զնի ծերութեան առաջին շրջանը։ Այնուհետև արագ արագ կը սպառւեն նրա ոյժերը, կը սառչեն նրա զգացումները, և յետոյ, մի օր, մի սարսափելի օր, նա այլ ևս չը կայ։ Խակ Բ'նչ է արել նա մինչեւ այժմ, և մի՞թէ նա պէտք է չքանայ առանց մի խոշոր հետք թողնելու իւր ետևից...

Կէսօր էր։ Նա արմունկը յենած կանանչ գետնին, գլուխը ձեռի ափի մէջ պահած, դիտում էր թփերի մէջ թռչկոտող ինչ-որ խայտապղէտ թռչնիկների խաղը։ Յանկարծ նրա առջեւ նկարւեց մի մարդկային մարմնի շւաք։

Նա յետ նայեց։ Մսերեանը կանգնած էր նրա գլխի մօտ գունաթափ դէմքով, վհատւած աչքերով, տրտում և միանգամայն անճանաչելի։

— Անպատճառ մի դժբաղդութիւն է պատահել, — գոչեց Դիմաքսեանը, գլուխը բարձրացնելով։

Մսերեանը ձեւով մի յուսահատ շարժում գործեց և, ուժապառ ընկղմելով կանանչ խոտի մէջ, թռյլ և ընկճւած ձայնով արտասանեց։

— Երկու ժամ է քեզ վնասում եմ։

— Նստիր և հանգստացիր, երեսիդ գոյն չը կայ, դողում ես։

— Դողմում եմ, լաւ, դողում եմ, ի՞նչ ես ուզում ինձանից, — գոչեց Մսերեանը բարկանալով, — տեսնում ես, որ չորացած, կուչ եկած տերեւի եմ նմանումն Բայց Թրբ եմ ասել, թէ ուզում եմ մրցել ուրիշների հետ այն էլ իմ սիրած ընկերոջ հետո Ավ, Արսէն, եթէ իմանայիր որքան ինքս իմ դէմ վրդովւած եմ։ Այս, այս, ծիծաղելի եմ ես, և ի՞նչ կը սազէր ինձ այս հասակումն խելքից զրկւել...

Արդէն Դիմաքսեանը մասամբ գուշակում էր, թէ ինչ է պատահել: Անցան մի քանի ըսպէներ, Մսերեանը փոքր ինչ հանդարաւեց և սկսեց եղելութիւնը պատմել:

Միթէ Դիմաքսեանը չը գիտէր նրա ամարանոց գալու շարժառիթը:

— Ուրեմն մի' ստիպիլ ինձ կարմրել, մանրամասնութիւնները պատմելով: Ես կասեմ այն, ինչ-որ միայն այսօր անցաւ իմ գլխով:

Բժիշկ Սալամբէկեանի երեալը զարթեցրեց նրա մէջ մի անտանելի նախանձ: Նա այլ ես չը կարողացաւ դիմանալ սրտի բուռն զգացմանը: Նա գուշակում էր, որ մի բան կայ օրիորդ կարինեանի և բժշկի մէջ և, եթէ լինէր դրական մարդ, կարող էր յետ կանգնել իւր անոտի յոցսերից: Բայց մի անյաղթելի ոյժ մզեց նրան դէպի առաջ և բաց արեց նրա ոտների տակ մի վիճ: Նրանի գոնէ մի օր նա լինէր Վէքիլեան կամ ունենար նրա քարոզած զգուշութիւնը և խոհեմութիւնը: Այն ժամանակ նա այսօրւայ «ցիմարութիւնը» չէր անիլ: Կը տանջւէր, բայց առանց ամօթի, առանց խղճի խալթոցի:

— Եւ գիտես ինչն է ինձ տանջողը կարծում ես նրա մերժելը: Ոչ. այդ բանին ես արդէն մի քիչ նախապատրաստած էի, երբ սկսեցի բացարձակ խօսել: Ինձ վշտացնում է այն, որ նա խելօք վարեց, իսկ ես յիմար: Եթէ տեսնէիր, ինչպէս նա աշխատում էր ինձ : Յ վշտացնել: Ես պարզում էի նրան իմ սիրոը, նա լսում էր հրեշտակի համբերութիւնով: Բայց խօսքս չը վերջացրած, նրա աչքերի մէջ կարդացի իմ պատասխանը: Նա մերժեց, բայց Բնապէս. կարծես, նա մեղաւոր էր իմ առաջեւ և ուղում էր արդարանալ, Է՛հ, ինչ երկարացնեմ: Նա բժշկին սկսել է համակրել դեռ ինձ հետ ծանօթանալուց առաջ: Նրանք նամակագրութիւն են ունեցել միմեանց հետ, երբ օրիորդը արտասահմանումն էր:

Նա ոտքի կանգնեց: Այդ րոպէին նա այնքան ճնշւած, այնքան վշտալի էր, որ Դիմաքսեանը պատրաստ էր ամեն բան անել: Միայն թէ այդպէս չը տեսնէր նրան: Նա մոռացել էր սեպհական վիշտը և մտքում որոնումէր խօսքեր, որոնցով հնար լինէր մակեթարել ընկերոջը: Բայց այդ դիւրին չէր: Ի՞նչ խօսքեր կարող էին սփոփել մի սիրտ, որ երեսնութ տարի կոյս էր մնացել, առաջին անգամ համակւել էր սիրոյ զգացումով, և այդպէս անաջող:

Մի ժամանակ նոյն յուսահատութեամբ Դիմաքսեանը պարզում էր իւր սիրտը Մսերեանի մօտ, և սա կարողանում էր նրան մխիթարել: Խակ այժմ իդէալիստի աչքերի մէջ երևացող խոնաւութիւնն անգամ չը թելաղրեց նրան մի մսիթարական դարձւած, մի խօսք: Ճիշդ որ այդ չափահաս մարդը, որի աչքերը գուցէ կեանքի ամենաղիւար րոպէներում արցունք չէին տեսել, այժմ, կարծես, ուզում է արտաւել Բայց ոչ, նա երեսը յետ դարձրեց, զսպեց իրան, և երբ կրկին նայեց ընկերոջը, արդէն բաւական հանդիսաւ էր նրա դէմքը:

—Միբատ, —խօսեց, վերջապէս, Դիմաքսեանը—միթէ դու ինձանից թոյլ ես, որ ալդպէս յուսահատում ես: Ճշմարիս է, քոնը աւելի ցաւալի է, որովհետեւ դու բացարձակ յայտնեցիր քո սէրը և բացարձակ էլ մերժում ստացար: Բայց մտածիր, որ կարինեանը քո ընկերոջը, այն էլ լաւ ընկերոջը, ընտրեց, իսկ Գայիհանէն իմ թշնամու, այն էլ վատ թշնամու կինը դարձաւ: Զոնէ այսքանը թող քեզ միսիթարի:

—Ընկեր, —կրկնեց Մսերեանը հեգնօրէն, —մին է զօրեղ, ընկերական սէրը, թէ սէրը դէպի կինը Համոզւմծ ես, արդեօք, որ քո և Բարաթեանի թշնամութեան գլխաւոր հիմքը Գայիհանէն չէ...

Այս խօսքերի մէջ կար մի դառն ճշմարտութիւն Դիմաքսեանի համար: Նա զգաց, որ լոկ համոզմունքների տարբերութիւնը դուցէ այնքան սուր կերպարանք չը տար նրանց թշնամութեանը, եթէ մէջ տեղ չը լինէր Գայիհանէն:

—Ուրեմն, —շարունակեց Մսերեանը, —մի՛ զարմանալ, եթէ ասեմ, որ ես այլ ևս այստեղ չեմ կարող մնալ և նրա երեսը տեսնել:

Եւ նա, անմիջապէս ձեռը թոյլ կերպով մեկնելով Դիմաքսեանին, աւելացրեց.

—Երեխ, դու դեռ կը մնաս այստեղ:

—Խակ զմւ:

—Գնում եմ:

—Ո՞ւր:

—Չը գիտեմ, միայն այստեղից պէտք է հեռանամ հէնց այսօր, հէնց այս ժամին:

Նա ձեռով մի տխուր, յուսահատ շարժում գործեց և քայլերը արագացրեց: Երկու ժամ անցած նա ուզեռւեց ամարանոցից, չը նայելով ընկերոջ թախանձանքին՝ դէմ մի քանի օր էլ սպասել:

Մնալով միայնակ, Դիմաքսեանը սկսեց աւելի տիրել: Նա ցաւակցում էր Մսերեանին անչափ, բայց, միևնոյն ժամանակ, ընկերոջ դժբաղդութեան մէջ նա զգում էր մի թեթև մխիթարութիւն: Այժմ նա տեսնում էր, որ միայն ինքը չէ անաջող բաղդի տէր, մերժած և մոռացած:

Նա շարունակում էր իւր մենակի զրոսանքները: Եւ միշտ նրա քայլերը ակամայ դիմում էին այն կողմ, ուր սովորաբար լինում էր Գայլիանէն: Բայց երեխաները և դայեակը միշտ միևնոյն տեղն էին լինում սովորական ժամին, իսկ Գայլիանէն մի քանի օր էր չեր երեսում: Նա սկսեց անհանգստանալ. չը լինի թէ հիւանդ է տիկինը: Մի անգամ, չը կարողանալով զապել բուռն հետաքրքրութիւնը, զգուշաբար հարցրեց դայեակին: Ուուս կինը աչքունքը թթւացնելով պատասխանեց, թէ ատիրուհին թէև պառկած չէ, բայց ատկար է»:

Դիմաքսեանը անտակութիւն համարեց աւելի հարցնել: Նա համբուրեց երեխաներին, նայեց մեծ-աղջկայ աչքերին, որ մօր աչքերին էին նմանում, թեթև հառաչեց և հեռացաւ, իւր սրտում տանելով մի ցաւակցութիւն դէպի այդ անմեղ արարածները: Յաւակցութիւն, բայց խառն մի անբացատրելի ատելութեան հետ:

Նա անցնում էր մի նեղ ծառուղիով, ոչ հեռու գետակից, գլուխը կրծքին թեքած, անուշադիր դէպի իւր շուրջը: Յանկարծ մէկը արտասանեց նրա անունը ետեից: Նա յետ նայեց և տեսաւ բժիշկ Սալամբէկեանին օրիորդ Կարինեանի հետ:

—Ես կամենում էի հարցնել երբ էք մտադիր վերադառնալ քաղաք, —հարցրեց օրիորդը Դիմաքսեանին:

Նա ինքը չը գիտէր, թէ երբ կը վերադառնայ, գուցէ վաղը, միւս օրը, գուցէ դեռ երկար ժամանակ կը մնայ:

—Ինչո՞ւ համար էիք հարցնում, —ասաց նա:

—Ոչի՞նչ, այնպէս:

Օրիորդը խօսում էր աստանւելով և կմկմալով: Նրանք առաջ դնացին մի քանի բոսիք լուռ: Իժիշկը մասիսհութեան մէջ էր, չէր

խօսումն Օրիորդը նայեց նրա երեսին, մոտածեց մի վայրկեան և ապա կրկին դարձաւ Դիմաքսեանին.

—Արդեօք պարոն Մսերեանի մասին տեղեկութիւն ունեք:

—Ո՛չ:

—Քանի՞ ժամանակ է անցել նրա գնալուց:

—Արդէն տասն օր է:

—Եւ դուք նամակ չունեք:

—Դեռ ոչ. Բ'նչ կայ...

Նա վախեցաւ, կարծելով ընկերոջը մի բան է պատահել, որ օրիորդը այնքան անհանգիստ կերպով հարց ու փորձ է անում:

—Ոչինչ չէ պատահել, ես միայն ուզում էի նրա մասին տեղեկութիւն ունենալ, ես նրան անշափ յարգում եմ...

Բժիշկը տակաւին լուռ էր: Մօտենալով ճեմելիքի ծայրին, նա նստեց նստարանի վրայ, ասելով, թէ սաստիկ յոդնած է: Մի քանի բոպէ անցած, օրիորդը հեռացաւ, մոնելով դիմացի ամարանոցը, ուր նա բնակում էր: Երկու ընկերները մնացին առանձին:

—Ես զգում եմ, որ նա քեզ բոլորը պատմել է,—խօսեց վերջապէս բժիշկը,—ուրեմն հարկ չը կայ թագցնելու: Բայց միթէ ես մեղաւմը եմ, որ գործը այս ընթացքը ստացաւ Դու գիտես, թէ ես որքան սիրում եմ և յարգում Մսերեանին...

—Միթէ ես այդ մասին մի խօսք ասացի, քեզ մեղադրեցի:

—Ո՛չ, բայց Բ'նչ և լինի, այժմ դու ինձ վրայ ուրիշ աչքով ես նայում...

—Ես քեզ վրայ այժմ էլ այն աչքով եմ նայում, ինչ աչքով նայում էի առաջ:

—Ծնորհակալ եմ, —արտասանեց բժիշկը զարթանալով, —ինձ համար այդ մեծ նշանակութիւն ունէ:

—Ես միայն զարմանում եմ բնութեան խաղի վրայ: Երբէք չէի կարող երևակայել, որ Մսերեանը մի օր կը յափշտակւի այդպէս: Իսկ դու, որ այնքան ծաղրաբար էիր վերաբերում կեանքին, դու որ դատարկ բան էիր համարում նրան, Բ'նչպէս եղաւ, որ այսօր յանկարծ երկու ձեռքով ես գրկում այդ դատարկ բանը:

—Ես ինքս չը գիտեմ, ինչպէս բացադրել: Միայն այսքանը կ'ասեմ, որ այն օրից երբ ես ճանաչեցի այդ աղջկան, իմ մէջ

սկսեց մի հոգեկան յեղափոխութիւն։ Թող հոգեբանը բացադրի այս, իսկ ևս այժմ այնքան ուզում եմ ապրել, որքան երբէք, երբէք չեմ կամեցել...

Եւ բժիշկը սկսեց ոգևորւած գովել օրիորդ Կարինեանին, ինչպէս սիրահար, կրկնապատճելով նրա արժանաւորութիւնները։ Դիմաքսեանը զգում էր, որ իւր մէջ դարձեալ շարժւում է նախանձը։ Նա մոքում պարսաւեց ինքն իրան և, աշխատելով գովել վատ զգացումը, անկեղծաբար տրապայտեց իւր բերկրութիւնը ընկերոջ երջանկութեան մասին։

Օրից օր նրա անհանգստութիւնը սաստիկանում էր։ Տասնեակ միմեանցից վատ մոքեր նրան հալածում էին։ Արդեօք Գայիանէն նրանից է խոյս տալիս, որ անից չէ զուրս գալիս։ Գուցէ նա վախենում է իւր ամուսնուց կամ հասարակական բամբասանքից։ Բամբասանք, բայց ինչու համար։ որ նա երբեմն դրսում պատահում է և խօսնում մի օտար տղամարդի հետ։

Նա աշխատում էր մի անգամ, անսպատճառ, ինչպէս և է, ուր և է, տեսնել Գայիանէին, ցոյց տալ նրան իւր սառն յարգանքը։ մի յարգանք, որ կարող է տիկնոջը համոզել, թէ երբէք նրա վրայ Դիմաքսեանը չէ նայում սիրահարւած մարդու աշքով։

«Այն, այսպէս պէտք է անեմ, ասում էր նա ինքն իրան, որ չը կարծի, թէ ևս կամենում եմ ծաղրել նրա դժբաղդութիւնը։»

Վերջապէս, մի օր նա տեսաւ Գայիանէին անսպատճիլի կերպով։

XVII

Տիկինը գալիս էր մի հարեան ամարանոցից, ուր ընակւում էր նրա ազգական ընտանիքներից մէկը։ Նա մենակ էր և ծանր հանդարտ քայլերով լնթանում էր առաջ, հայեացքը ուղղած անորոշ տարածութեան մէջ։ Փւում էր, որ ամբողջ էութիւնով նա խորասուզւած է իւր հոգոյ մէջ և արտաքին աշխարհը նրա համար գոյութիւն չունէ։

Տեսնելով Դիմաքսեանին, նա չը շփոթւեց։ Միայն մի թեթև անցողիկ ժպիտ սահեց նրա դէմքի վրայ, ինչպէս անձայն հողմի մեղմիկ շունչը անդորր ծովի մակերևոյթով։

Դիմաքսեանը մօտեցաւ նրան գրակը ձեռին և ջերմ յարզանքով սեղմեց նրա աջը։ Այլ ևս Գայիանէն ճիգ չէր անում իւր տիրութիւնը թաղցնելու։ Նրա խոհուն ճակատի վրայ որոշ գծագրւած էր այն տառապանքը, որ աիրել էր նրա հոգուն։ Դիմաքսեանը շտապեց հարցնել նրա առողջութեան մասին և իսկոյն խօսքը դարձրեց այնպիսի նիւթերի վրայ, որոնց մասին առիթ էր որոնում խօսելու։ Նա տեսաւ, որ տիկինը խոյս չէ տալիս խօսակցութիւնից, այլ ընդհակառակը տրամադիր է երկար խօսելու։

—Ես ամեն օր պատահում եմ ձեր երեխաներին, ինչքան նման են նրանք ձեզ։ Սովորած լինելով նրանց միշտ իրանց մօտ տեսնել, ցաւում էի առանց ձեզ տեսնելով։

—Դուք առհասարակ երեխաներ սիրում էք, —հարցրեց տիկինը։

—Միթէ կարելի՞ է չը սիրել անմեղութիւնը։

Տիկինը անփոյթ կերպով նստեց առաջին պատած նստարանի վրայ։ Դիմաքսեանը կանգնեց նրա դէմ, շարունակելով։

—Մարդկային արարածները արժանի են սիրոյ քանի որ փոքրիկ են։

—Քետոյ, պէտք է խղճալ նրանց։

—Խչիւ։

—Որովհետեւ ապագայում կեանքը այնքան աղաւաղում է նրանց, որ միայն խղճալու են արժանի։

Գայիանէն, որ սովոր էր միշտ իւր ամու մնուց լսել կիսահեղնական և կատականման խօսակցութիւն նոյն իսկ ամենալուրջ նիւթերի մասին, մի տեսակ թարմութիւն զգաց, խօսակցելով մի մարդու հետ, որի ուղեղը ընդհակառակը միշտ լուրջ էր տրամադրւած։

—Միթէ ձեր կարծիքով կեանքը ամենքին է աղաւաղում, —հարցրեց նա։

—Անկասկած, քանի որ մարդը չէ կարող միշտ երեխայ մնար Այստեղ խնդիրը վերաբերւում է կրթութեանը և կեանքի ազդեցութեանը։ Կրթութեան այն եղանակը, որ տիրում է մեր զպրոցներում, աւելի աղաւաղում է, քան կրթում մարդկային բնաւորութիւնը։ Մնացեալը լրացնում են ընտանիքը և հասարակութիւնը։

Անշուշտ, դուք պէտք է համաձայն լինեք ինձ հետ, որ սուտը և կեղծութիւնը վնասակար են. նոյնպէս չը պիտի հերքէք, որ մեր կեանքում այդ բացասական յատկութիւնները զօրեղ դեր են կատարում:

—Դուք խօսում էք այնպէս, ինչպէս մի քանի տարի առաջ:

Անցեալի մտարերելլ Դիմաքսեանին շփոթեցրեց ախորժելի կերպով: Ներքին հաճոյքից նրա աչքերը փայլեցին և շարժուն դէմքը արտայալտեց մի անզսպելի բերկութիւն:

—Միթէ դուք կը կամենայեք, որ այժմ ուրիշ կերպ խօսէի,—ասաց նա ոգևորելով,—այն, սուտը և կեղծութիւնը ես միշտ դատապարտել եմ և պիտի դատապարտեմ, առանց ուշադրութիւն դարձնելու նրանց արդարացնող պատճառների վրայ...

Նա կանգ առաւ, նա վճռել էր միմիայն սառն բարեկամական յարդանք ցոյց տալ տիկնոջը: Իսկ այժմ զգում էր, որ անկարող է իւր վճիռը հաստատապէս կատարել: Մի քանի վայրկեան լուց յետոյ, նա աւելացրեց.

—Բայց երբեմն ամենաառաքինի մարդիկ անգամ ենթարկում են ստի և կեղծութեան ազդեցութեան, և ենթարկում են ակամայ, անգիտակցաբար: Եթէ նրանք ունենային աւելի քաջութիւն դիմադրելու աւանդական նախապաշար: մունքներին, այն ժամանակ կը լինէին աւելի անկեղծ և միշտ ճշմարտախօս:

Գայիհանէն լուռ լսում էր նրան, աշխատելով ըմբռնել այդ անորոշ խօսքերի տակ թագնւած իմաստը:

—Ես կարծում եմ,—շարունակեց Դիմաքսեանը աւելի. ոգևորելով: - Թէ կը գայ ժամանակ, որ այդ մարդիկ իմ ասած քաջութիւնն էլ կունենան: Ուզում եմ ասել, թէ կը գայ ժամանակ, որ մեր խօսքի և մոքի, զգացումների և դործերի մէջ տիրող հակասութիւնը կը պակասի: Տիկին, մենք այժմ հազիւ կիսով չափ պատկանում ենք մեզ, իսկ մեր էութեան, մեր բարյոյական և մուաւոր կազմի միւս կէսը հասարակական նախապաշարմունքների ստրուկն է: Գուցէ հէնց այդպէս էլ հարկաւոր է, գուցէ անհրաժեշտ է, որ հասարակութիւնը մարդու գլխին լինէ մի դատաւոր, մի վերահսկող, քանի որ անհատը դեռ չէ կատարելագործել: Բայց նա, որ զգում է իւր մէջ սեպհական ոյժ, ինքնուրոյնութիւն և մտքի

աներիկւղ քաջութիւն, նա վրդովլում է այդ ինքնակոչ վերահսկողի դէմ, որ միշտ ձգտում է բռնակալի դեր կատարել: Խնչնեւ Որովհետեւ նա տեսնում է, որ այդ վերահսկողը ինքը, իրեւ անհատի կրթիչ, իրեւ ուղեցոյց, իրեւ առաջնորդ, տհաս է, կարճատես է: Այդ տեսակ ինքնուրոյն խելք և սկզբունքներ ունեցող մարդը մոտածում է. «Բ' նչ անեմ, մի՞թէ զնամը ընդհանուր հոսանքով»: «Ո՛չ, պատասխանում է նրան ներքին ձայնը, չը պիտի գնաս, աշխատիր ինքդ առաջնորդելնրան, որ քեզ ուզում է առաջնորդել և, եթէ ոյժերդ քեզ չեն դաւաճանիլ, մէկ մէկ խորտակիր նրա դէմ կանգնած խոչնդուները»:

Վերջացնելով խօսքը, նա ձեռները յենեց ձեռափայտին և հայեացքը ձգեց հեռու ու հեռու: Կարծես, այդ վայրկեանին նա մոռացել էր. իր խօսակցին, ինքն իւր մոքերի բուռն հոսանքով յափշտակւած:

Գայիհանէն լուռ էր: Նա արդէն մասամբ գուշակում էր, թէ Դիմաքսեանը ինչ բան է ակնարկում և առհասարակ ինչ տեսակ քաջութեան ու ինքնուրոյնութեան մասին է խօսում: Այդ խօսքերը բաց էին անում նրա համար մի նոր, բոլորովին անծանօթ աշխարհ, ուր մինչև այդ ժամանակ չէր թափանցել նրա միտքը:

Ուշադրութեամբ լսելով Դիմաքսեանին, նա թոյլ էր տալիս իրան միանդամայն անձնատուր լինել նրա ասածների ազդեցութեանը: Եւ զգում էր, որ մի ինչ-որ բուռն, անդիմադրելի բայց վերին աստիճանի ախորժելի հոսանք հետզհետէ դրաւելով քաշում ու տանում է նրան յայտնի չէ ուր:

Մի վայրկեան նա նայեց ոգևորւած երիտասարդի դէմքին, և այդ վայրկեանին Դիմաքսեանը երևեց նրան միանդամայն կերպարանափխւած: Կարծես, դա այն մարդը չէր, որին հինգ-վեց տարի առաջ տեսաւ Քարաթեանի հետ առաջին անդամ: Նրա դէմքի գծերը յարատես և լարւած մտաւոր գործունէութիւնից մեղմացել էին և նրբացել: Խոշոր, ազդու աչքերի մէջ հասուն խելքի հետ անդրադառնում էին հոդոյ ազնւութիւնը և կամքի անշեղութիւնը:

Այսուեղ Դայիհանէի միտքը դարձեալ թռաւ դէպի համեմատութիւն: Նրա առջև պատկերացաւ մի ժամանակայ իւր գեղեցիկ ամուսնու այժմեան կուշտ, կարմիր դէմքը, ուռած այտերով և իւ-

զալի աչքերով։ Ի՞նչ տարբերութիւն։ մէկի մաքի կորովութիւնը տեղի էր տւել մարմինի պարարտութեանը, հողին սրտի հետ պատել էր թանձր ճարպով։ Միւսի հոգեկան ոյժը տաշել և յդկել էր նրա ոչ-զեղեցիկ դէմքը և զարձրել միանգամայն անճանաչելի։

Իւր կողմից Դիմաքսեանը գաղտուկ դիտում էր տիկնոջը և զրեթէ նոյն փոփօխութիւնը տեսնում ձշմարիտ է, չը կար նախկին թարմութիւնը և աշխոյժը, կենսականութեան հուրը առաջւայ զօրութիւնով չէր փայլում նրա կապուտակ աչքերի մէջ։ Բայց սրա փոխարէն նրա դէմքը այժմ այնքան մոռախոհ, լուրջ և արտայացտիչ էր դարձել, որ Դիմաքսեանը այժմեան Գայիանէին չէր կամենալ փոխել առաջւայ արագաշարժ, զւարե՛ և վարդառուն օրիորդի հետ Ընտանեկան անաջող կեանքը, հոգու յարատե տառապանքը խլել էին նրա երիտասարդական կրակը և փոխարէնը պարզեց մի մեղմ, մի հեղ, մի անոյշ թովվշութիւն։ Օ՛օ, որքան նա պաշտելի էր իւր դժբաղզութեան մէջ և որքան անմատչելի իւր բարձրութեան վրայ։

Նայերով նրան, Դիմաքսեանի մէջ զարթնում էին ամենաաղնիւ և ամենաանարատ զգացումներ։ Նա պատրաստ էր այդ անբազդ կնոջ համար հանդիսանալ մի անկեղծ, անձնւէր պաշտպան և իւր սրտի նւիրական հուրը զոհել նրա բաղդին։ Եւ նա փափագում էր, բայց չը գիտէր ինչ խօսքերով արտայացաել այդ զգացումը։ Միւնոյն ժամանակ, նա սաստիկ ցանկանում էր, որ Գայիանէն պարզի իւր ցաւերը նրա առջև անկեղծաբար, հաւատալով նրա ազնւութեանը։ Նրան թւում էր, թէ Գայիանէն ինքը զգում է այդ տեսակ պահանջ, որ ապերջանիկ կնոջ դառնութիւնները այնքան ծանր և անտանելի են, որ պատրաստ է մի հաւատարիմ մարդու մօտ պարզել իւր սիրտը։ Սակայն նոյն հասարակական «նախապաշարմունքները», նոյն «կեղծութիւնը» կաշկանդում են նրա լեզուն։

—Պարզութիւնը իմ կարծիքով ամենազլիսաւոր առաքինութիւնն է, —շարունակեց նա, այլ ևս չը կարողանալով զսպել իրան։ —Ով զուրկ է անկեղծութիւնից, նրա միւս բոլոր արժանաւորութիւնները նսեմանում են իմ աչքում։ Շատ անդամ մտածում եմ և ինձ համար բնաւ անհասկանալի է դառնում։ ինչի՞ւ մենք միշտ կեղծում ենք։ Ինչի՞ւ հարուստը աղքատ է ձեւանում, աղքատը —հա-

բուստ, յիմարը — փելիխսովիաց, խելօքը — ճգնաւորւ Խնչու նա, որին ճակատագիրը անբաղդ է դարձրել — բաղդաւոր է ձևանում: Մինչդեռ նրա քայլւածքը, նրա ձայնը, վերջապէս, նրա ամբողջ կերպարանքը մատնում են նրան, ցոյց տարով նրա վախը նախապաշար հունքներից, նրա կեղծութիւնը...

Նրանց աշքերը կրկին հանդիպեցին միմեանց:

Գալիխանէն գլուխը խոնարհեցրեց և սկսեց հովանիի ծագրով ցնցողաբար փորփորուել խոնաւ գետինը:

Ակնարկը բաւական պարզ էր, բաւական հասկանալի: Նա զգաց, որ Դիմաքսեանը սպասում էր նրանից անկեղծութիւն, որ նա արդէն թափանցել է նրա հոգոյ խորքը և այնուեղ պարզ կարդում է բոլոր վշտերը: Բայց ինչու, ինչ իրաւունքով: Ո՞վ է նա, որ այնպիսի յանդգնութեամբ մօտենում է նրա ներքին աշխարհին և այնտեղ ամենայն խստութեամբ շոշափում նրա հոգու նւիրական գաղտնիքները: Ոչ, ոչ, դա աններելի է մի մարդու կողմից, որին նա ոչ մի իրաւունք չէ տւել, ոչ մի ակնարկով չէ մօտեցրել իրան: Նա գլուխը բարձրացրեց այն ժամանակ, երբ Դիմաքսեանը նացում էր մի ուրիշ կողմէ: Երիտասարդի գունատ և խելացի ճակատը, երեսի մեղմիկ ցնցող մկանունքները պարզ արտապայտում էին, թէ ինչ է կատարում նրա հոգուն: Մի վայրիեանում տիկնոչ հայեացը դարձեալ փոխւեց նրա մասին: Խնչոր մի ներքին ոյժ, ցաւակցութեան թէ խղճահարութեան նման մի բան, յուզեց նրա սիրտը: Նա զըզաց, որ նոյն իսկ մի վայրիեան թոյլ էր տւել իրան կասկածել այդ մարդու հոգու մաքրութեան մասին:

— Դուք ամեն բանում պահանջում էք պարզութիւն, — արտասանեց նա երերւող ձայնով, — այդ անկարելի է:

— Գիտեմ անկարելի է, չէ որ բանակալ վերահսկողը թոյլ չէ տալիս, չէ որ հասարակութեան կոյր կարծիքը կաշկանդում է մեր եղուն, չէ որ մենք սարսափում ենք նրա միակողմանի դատապալանից:

— Այդ չէ միայն, այդ չէ, — կրկնեց Գայիանէն, հովանիի ծագրը մի քանի անգամ թեթեակի խիելով գետնին, — կան բաներ, որոնց մասին մարդ չէ կարող անկեղծ լինել, եթէ նա չէ կամենում յիմարի անուն ստանալ:

— Այս, այն մարդկանցից, որոնք անկեղծութիւնը լիմարութիւնից ջոկել չը գիտեն: Եթէ ես համոզւած եմ մէկի խելքին և ազնւութեանը, եթէ ես հաւատացած եմ, որ այդ մարդը երբէք ի շարը չի գործ դնիլ իմ հաւատարմութիւնը, միշտ կարող եմ նրա հետ պարզախօս լինել:

Նա կանգ առաւ: Նա զգաց, որ շատ է յափշտակւում, շատ է հեռու գնում: Նա կարծեց, որ մինչև անդամ վիրաւորեց տիկնոջը: Բայց նայեց նրա երեսին և այնտեղ նկատեց մի ներողամիտ և, միևնոյն ժամանակ, մի քաջալերական հայեացք: Այդ հայեացքը, կարծես, առում էր. «Ես հաւատում եմ, որ դուք և՛ խելօք էք, և՛ ազնիւ, կարող էք և՛ հաւատարիմ լինել» բայց մի՛ պահանջէք ինձանից անկարելի անկեղծութիւն: Մի պահանջէք, որովհետեւ ես կին եմ, դուք տղամարդ, որովհետեւ դուք օտար էք ինձ համար և, որովհետեւ դուք իմ ամուսնու թշնամին էք»:

Նա արագութեամբ ոտքի կանգնեց: Նա կորցրեց իւր բանի սառնութեան վերջին կաթիլը: Դողդոջուն ձայնով և շնչարառ արտասանեց:

— Թող որքան կամենում են թագցնեն, բայց ես մարդկանց աչքերի մէջ կարդում են նրանց հոգին, նրանց սրտի վիճակը, նրանց զժբաղդութիւնը...

Եւ, մի վայրկեան շունչ առնելուց յետոց, աւելի յափշտակւած աւելցցրեց.

— Իմ զազափարները իմ սրբութիւններն են, երդում եմ նրանցով, որ իմ սրտում կայ միայն ցաւակցութիւն, անկեղծ բարեկամական ցաւակցութիւն: Տիկին, ես սուս կասէի, բայց չը գիտեմ սուս ասել, ես կը կեղծէի, բայց վարպետ չեմ կեղծելում: ահա ինչն է ստիպում ինձ ձեր երեսին ասել այն, ինչ-որ ուրիշները կը թաղցնէին...

Այս խօսքերը նա մի այնպիսի ներշնչւած հոգով էր արտասանում, այնքան անկեղծութիւն և ազնւութիւն էր բուրում նրա զէմքից, ձայնից և ամբողջ էութիւնից, որ Գայցանէն չը կարողացաւ ոչ վիրաւորել, ոչ հակամառել: Նա տեսնում էր իւր առջև մի մարդ, որ ոչնչով չէր նմանւում այն բոլոր մարդկանց, որոնց մինչև այդ օրը նա հանդիսվել էր: Մի մարդ, որը որքան համարձակ, աներկիւդ և

մինչև անգամ յանդուզն լինէր, այնքաննրա հոգին բարձր էր, սիրտը անարատ և խելքը անշեղ, կարուկի նա այդպէս զգաց, և յուզ- ւեց: Նա այլ ևս չը կարողացաւ պաշտպաննել, կեղծել, թագցնել իւր դժբաղդութիւնը: Եւ ինչ օգուտ, քանի որ պէտք է նորից ստէր նրա առջև և նորից ցոյց տար իւր հոգու տկարութիւնը:

Զգացւած մինչև հոգոյ խորքը, նա դուխը դարձեալ թեքեց կրծքին և կամացով արտասանեց.

—Ես հաւատում եմ ձեր ազնւութեանը...

Նոյն վայրկեանին նա խօսքը ընդհատեց և իսկոյն ոտքի կանգ- նեց: Նա դողում էր, նա մի տարօրինակ երկիւլի մէջ էր: Կարծես, մի բան էր արել, որ չը պիտի անէր, մի համարձակ, մի վերին աստիճանի պատասխանատու քայլ, որ, միևնոյն ժամանակ, ցոյց էր տալիս նրա հոգու ոյժը և կամքի ինքնուրոյնութիւնը: Նա նայեց գետնին, ապա դլուխը բարձրացրեց: Կարծես, նա ուզում էր խօսքը կիսատ թողնել և հեռանալ, բայց տատանւում էր:

Այն ինչ՝ Դիմաքսեանի սիրտը լցւել էր ասպետական հպարտ զգացութներով: Այն կինը, որին պաշտում էր, որի պատկերը մի քանի տարի շարունակ չէր հեռանում նրա մոլքից և աչքերից, վերջապէս, ասում է, թէ հաւատում է նրա ազն ութեանը: Նա չէ մերժում նրա բարեկամութիւնը, չէ վիրաւորում նրա պարզախօսութիւնից: Ի՞նչ անսպասելի երջանկութիւն:

Տիկինը լուռ մեկնեց նրան իւր ձեռը: Նա պատրաստ էր խո- նարհել և համրուրել այդ ձեռը ինչպէս մի սրբութիւն: Բայց այդ անկարելի էր, բնական ամօթխածութիւնը մի անգամ ևս կաշ- կանդեց նրան: Եւ նա, ջերմագին սեղմելով Գայիհանէի ձեռը, ասաց.

—Արդեօք, ես ձեզ վիրաւորեցի:

—Ոչ, ընդհակառակը, դուք ցոյց էք տալիս ինձ ձեր բարե- կամութիւնը: Ննորհակալ եմ, եթէ երբէք չէք շեղւիլ բարեկամու- թեան շաղից և աւելի...

Դիմաքսեանը ընդհատեց նրա խօսքը, մի ցնցողաբար շարժում գործելով և արտասանելով:

—Տալիս եմ ձեզ ազնիւ խօսք՝ երբէք չը շեղւել...

Եւ մնալով միևնոյն տեղում, աչքերով մինչև ամարանոցի գոները ուղեկցեց Գայիհանէին, որ հեռանում էր արագ քայլերով.

«Երբէք չը շեղւել, կրկնեց նա մոքում, ոչ, չեմ շեղւիլ, պաշտելի արարած, որովհետեւ միայն քո բարեկամութիւնը կարող է ինձ երջանկացնել...»